



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22.388

331

10-83

68

Ե. ՌՈՓՉԵԱՆ

ԵՐԶԵՍԵԿՑԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

4-րդ հարկ

Կոպ.

1906
թԻՅԼԻՍ

15 JAN 2010

05 FEB 2007

№ 8

Գրադարանի «Յանազ»-ի

331.71

Թ-83

Ե. ԹՈՓՉԵԱՆ

ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ

ՄԻՈՒԹԻԻՆՆԵՐ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Մազաթեան փող. 5.

1906

(180)

11388

A. Bedikian

Արհեստակցական միութիւնները սօցիալիզմի գլխաւոր սկզբունքներն են: Այդ միութիւնների մէջ բանւորները սօցիալիստներ են դառնում, որովհետեւ օրէց օր կուռում են կապիտալի դէմ:

Կարլ Մարկս

Արհեստակցական միութիւնը մի այնպիսի բանւորական կազմակերպութիւն է, որ գոյութիւն ունեցող պետական և հասարակական կարգերի սահմանում ձրգտում է աշխատաւորների կենսական մակերևոյթը բարձրացնել:

Աւգուստ Բեքել

Արհեստակցական միութիւնը ոչ միայն բանւորներին հնարաւորութիւն է տալիս ժամանակակից պայմանմաններում կուելու, կապիտալիստական ըեժիմի տակ պաշտպանելու աշխատավարձը, առողջութիւնը և ազատութիւնը, այլև նախապատրաստում է նոր կազմ, արթնացնելով պրօլետարների նախաձեռնութիւնը և ձևակերպելով գործողութեան օրգանները, որոնք կօմունիստական կարգերում գործադրւելով, կդառնան վարչական օրգաններ:

Փան Ժօրէս

Ընդհանուր, միջազգային հոսանքը ուժեղ թափով մղում է դէպի կուսակցական քաղաքականութեան և արհեստակցական միութեան միացումը և ոչ թէ բաժա-



(318-59)

1649-2002

նումը, այդ պատճառով արհեստակցական միութիւնները պէտք է հետևեն կուսակցական քաղաքականութեան:

Կարլ Կաուցկի

Արհեստակցական միութիւնները անկուսակցականութիւնը մեզ վտանգ է ներշնչում:

Էմիլ Վանդերվելդ

Պէտք է արհեստակցական միութիւնները և քաղաքական կուսակցութիւնը կազմեն մի անբաժանելի ամբողջութիւն, փոխադարձաբար պաշտպանեն ու լրացնեն միմեանց:

Հայնրիխ Ծսրեբէլ

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն

Ռուսաստանի յեղափոխական-ազատարար հովերը ուժգին գարկ աւին աշխատաւոր դասակարգի շահերը պաշտպանող հոսանքներին ու դրանց հետ շողկապած կազմակերպութիւններին: Իրա անմիջական հետևանքն է արհեստակցական այն դօրեղ շարժումը, որ օրէցօր աճում ու զարգանում է Ռուսաստանի մէկ ծայրից մինչև միւսը և որը վաղուց արդէն մտցրել է իր յորձանքները Կովկասեան իրականութեան մէջ, մեղանում էլ հերթական հրատապ պահանջ դարձնելով կանոնաւոր արհեստակցական միութիւններ կազմակերպելը:

Ահա այդ պահանջի իրականացմանը որոշ չափով նպաստելու ցանկութեամբ էր, որ «Ալիք» օրաթերթում լոյս ընծայեցինք մի շարք յօդածներ՝ «Արհեստակցական միութիւններ» խորագրով և այժմ նոյն աշխատութիւնը մի քանի յաւելումներով տպագրում ենք առանձին գրքոյկով:

Արհեստակցական միութիւնները այնքան խոշոր դեր են խաղացել քաղաքակիրթ երկիրներում, այնքան երկար ու խճրատական պատմութիւն ունեն և այժմ էլ այնքան լայն ու կարևոր է նրանց նշանակութիւնը աշխատաւոր դասակարգի շահերի պաշտպանութեան տեսակէտից, որ այդ բոլորի մանրամասն պատկերը տալու համար ամբողջ հատուղներ պէտք է գրել, բայց այդ չէ մեր նպատակը:

Ներկայ աշխատութեամբ մենք ցանկացել ենք 1) համառօտակի բնորոշել «Արհեստակցական միութիւնները» դերն ու նշանակութիւնը, 2. լուսաբանել առանձնապէս մեր իրականու-

թեան մէջ մեծ նշանակութիւն ունեցող հարցը՝ թէ արդեօք այդ միութիւնները ի՞նչպիսի հիմունքներով պէտք է կազմակերպել՝ կուսակցական, թէ անկուսակցական և Յ) մի քանի գործնական խորհուրդներ և ուղեցոյց տալ այդ միութիւնները ցանկալի ու նպատակայարմար ձևով կազմակերպելու համար:

Իսկ թէ ուրիշ երկիրներում արհեստակցական միութիւնները ինչպէս են առաջ եկել ու զարգացել, ի՞նչ դեր են կատարել և այժմ ինչ վիճակի մէջ են—այդ մասին պատրաստում ենք մի ուրիշ գրածք, որ մօտ ապագայում լոյս է տեսնելու իբրև լրացումն ներկայ աշխատութեան:

Ե. Թ.

Հարստութիւնն ու չքաւորութիւնը իբրև հետեւանք շահագործման.— Գործարանական բանտրները եւ արհեստանոցային աշխատաւորները.— Անգլիայի օրինակը.— Համերաշխութեան անհրաժեշտութիւնը եւ արհեստակցական միութիւնները իբրև շահերի պաշտպանութեան միջոց:

Հարստութիւնն ու չքաւորութիւնն, աշխատանք ու շահագործում— անհայն երկու հակադիր երևոյթները, սրտնք օրէցօր աւելի ու աւելի ցայտուն գոյներով ասպարէզ գալով, զարկ են տալիս սօցիալական հարցին և բազմազան միջոցներ ու ճանապարհներ բաց անում այդ հարցի լուծման համար:

Անցէք գիւղեր, քաղաքներ, ուշի-ուշով դիտէք կեանքի ելևէջները և դուք ամեն տեղ կը նկատէք այդ երկու հակադիր երևոյթների խոր հեռքերը բնորոշ գոյներով պատկերացրած:

Իսկ այդ պատկերները իրենց բովանդակութեամբ լուրջ խորհրդակցութեան նիւթ են մատակարարում:

Անթիւ մարդիկ, անհամար ընտանիքներ տքնում են չքաւորութեան ճանկերում, տանջւում են կարիքի հարւածներից:

Ինչո՞ւ:

Արդեօք բնութիւնն է մեղաւոր, արդեօք մարդկա-

յին ծուլութիւնն ու անընդունակութիւնն է պատճառը: Երբէք:

Բնութիւնը մայր է ամենքի համար. նրա առաջ չը կան հարազատներ ու խորթ զաւակներ, չը կան ընտրեալներ ու հալածւածներ: Նա պատրաստ է իր առատ սուրբերը մատակարարելու ամենքին՝ միայն թէ ցանկացողներ ու աշխատողներ լինեն:

Եւ մատակարարում է: Բայց մարդիկ արդարութեան ուղիից շեղելով, շրջապատող հասարակական-տնտեսական պայմաններից օգտւելով, միշտ ձգտել են շահագործել միմեանց, սեփականել ուրիշի աշխատանքի արդիւնքը: Եւ ստեղծել է կեանքի դժոխքը իր մռայլ տեսարաններով:

Ահա մեծ ու փոքր քաղաքներ բազմամարդ տներով, հսկայ գործարաններով, մանր ու խոշոր արհեստանոցներով, վաճառանոցներով:

Աշխատանքն է եռում այդտեղ, ծանր ու անգուլ աշխատանքը: Գիշեր ու ցերեկ հնչում է նրա դարկը, դիզում են արտադրութիւնները: Բայց ով է վայելում...

Ահա գործարանը. այդտեղ մեքենաների շուրջը մըրջիւնների նման վխտում են բանւորները, գործում են նրանց ջլուտ ձեռքերը, թափում է արիւն-քրտինքը, և արժէքաւոր նիւթերը, գործիքներն ու իրերը միմեանց յետևից պատրաստւում-դիզում են, որպէսզի շուկայ գնան, վաճառքի հանւեն և կանխիկ դրամի վերածւեն:

Սակայն այդ ամենի արդիւնքը այն աշխատաւորները չեն վայելում, որոնք քրտինք են թափում, քուն ու հանգիստը կտրում:

Ո՛չ. նրանք պէտք է բաւականանան միայն որոշ օրավարձով: Ճիշտ է, այդ օրավարձը շատ անգամ չէ բա-

ւականացնում նոյն իսկ օրական հասարակ ապրուստի, չի ծածկում նոյն իսկ ամենամանրածեղտ ծախսերն ու կարիքները, բայց ի՞նչ փոյթ. ով է դրա մասին մտածողը: Այդ ջլուտ ձեռքերից գատ, գործարանական ծուխ ու մրուրից հեռու կայ մէկը, որ տէր ու իշխան է գործարանի, որ թէև չէ աշխատում, դառնութեան լծին թէև չէ մասնակցում, բայց և այնպէս իր ապարանքում խաղաղ ու հանգիստ նստած վայելում է հարիւրաւոր ու հազարաւոր մարդկանց ծոր-ծոր քրտինքի վաստակը: Վայելում է, միևնոյն ժամանակ նորանոր հարստութիւններ դիզելով:

Այո, նա—այդ կապիտալիստը, գործարանատէրը վայելում ու դիզում է աշխարհի բարիքները, հարստութիւնները, իսկ այնտեղ նրա աշխատաւորները դարձեալ տքնում, աշխատում, տէր-կապիտալիստի հրամաններն ու ցանկութիւններն են կատարում, իսկ երբ հիւանդացան, դժբախտ պատահարից վնասւեցին ու աշխատանքի անընդունակ դարձան—այդ դէպքում նրանց դուրս են շրպըրտում գործարանից, իբրև անպէտք իր, հեռացնում են աշխատանքի ասպարիզից, առանց մի ըոպէ մտածելու նրա վիճակի, նրա ընտանիքի մասին:

Իսկ գործարանը դարձեալ եռում է, դարձեալ իր գերը կատարում՝ նորանոր ձեռքեր գրաւելով իր շուրջը:

Իսկ գործարանատէրը դարձեալ դիզում է իր հարստութիւնը, առանց մի ըոպէ մտածելու, թէ ինքը չէ դրանց արտադրողը, թէ դա այն խեղճ ու կրակ բանւորների քրտինքն է կաթիլ-կաթիլ քամւած, որ աշխատում են, բայց քաղցած, որ տանջւում են, բայց միշտ զրկւած...

Այդպէս է ընթանում կեանքը գործարանների շըր-

Չանում, այդպէս է շահագործուում մարդկային աշխատանքը մեքենաների միջոցով:

Ի՞նչու գանք այժմ գործարաններից, մի բոլոր մուսուլմաններ այդտեղ տիրապետող անարդարութիւնն ու անհաւասարութիւնը և մտնենք նոր շրջան—արհեստանոցները:

Ի՞նչ է կատարուում այդտեղ:

Ահա կօշկակար արհեստաւորը իր օգնականներով, բանւորներով, աշակերտներով:

Իեւ լոյսը հազիւ բացւած նրանք խմբուում են արհեստանոցում և աշխատում մինչև ուշ երեկոյ...

—Շուտ, շուտ, տղերք ջան, շուտ—մերթ ընդ մերթ հնչում է մէկի կամ միւսի քաջալերիչ խօսքը, աշխատենք այս գոյգը հասցնել մինչև երեկոյ... աշխատենք շուտ վերջացնել այս ինչ գործը...

Եւ շուտ ձեռքերը գործում են աւելի լարւած, աւելի արագ...

Այդպէս անցնում են օրերը, շաբաթները. եւուն աշխատանքի բեռի տակ տքնում են մանր ու խոշոր արհեստաւոր-կօշկակարները, բայց դարձեալ չքաւորութեան լծի տակ հեծում...

Ահա դերձակի արհեստանոցը: Նոյն երեկոյթը, աշխատանքի նոյն գործողութիւնը այստեղ էլ կրկնուում է նոյնանման արդիւնքներով:

Իրանք, այդ դերձակ աշխատաւորները, հալ ու մաշ են լինում ուրիշների համար փառահեղ հագուստեղէն ու գեղեցիկ պաճուճանքներ պատրաստելով. անգուղ ջանքեր են թափում իրենց արտադրող ոյժն աւելացնելու նպատակով, բայց և այնպէս դարձեալ կեանքի բարիքներից ու յարմարութիւններից կարօտ մնում...

Հապա դարբինները, որ «կռանը ձեռքին, գնդանն առաջին» մաշում են իրենց երկաթէ ոյժն ու առողջութիւնը:

Հապա հացթուխները, որ վառ կրակի առաջ կանգնած, գիշեր ցերեկ հալ ու մաշ են լինում ուրիշների կերակրելու համար:

Հապա գործակատարները, որ երկար ու ձիգ ժամերով տքնում են իրենց «տէրերի ու գնողների» հաճոյքը կատարելու համար:

Հապա «չուտ կարողները», անտղձագործները, հիւսնները, քարաշէները, սրմնադիրները, թիթեղագործները և միւս արհեստաւորներն ու աշխատաւորները— դրանք բոլորը, բոլորը նոյն երկաթէ պայմաններում գիշեր ու ցերեկ աշխատում են և անսահման շահագործուում. դառն քրտինք են թափում, բայց քաղցած ու զրկւած մնում...

—Այդ շուտ ձեռքերի աշխատանքը, իրաւացի կերպով ասում է Լասսալ, դարձել է մի համեղ պատառ, որի հիւթերը տզրուկի նման անվերջ ծծում են շահագործողները...

Եւ այդպէս կատարուում է ոչ միայն մեզանում՝ կովկասում կամ Ռուսաստանում, այլ և աւելի քաղաքակիրթ երկրներում, ամեն տեղ:

Աշխատանքի շահագործումը և դրա հետևանք կազմող հարստութիւնն ու չքաւորութիւնը համաշխարհային մի երեկոյթ է, որի յորձանքները ուժգին թափով անցել են և անցնում են երկրից-երկիր:

Նոյն իսկ աշխարհի ամենահարուստ մի մասում— Անգլիայում, Բուտսի հաշուով ազգաբնակչութեան 35% -ը չքաւորութեան մէջ է հալ ու մաշ լինում: Միայն Լօն-

դօն քաղաքում 1880 թ. սովամահ են եղել 101 հոգի, իսկ 1892 թ.—31:

— Ամբողջ Անգլիայի սարեկան եկամուտը, ասում է Հօբսոն *), հասնում է 1,300,000,000 ֆունտ ստերլինգի, բայց դրանից միայն 500,000,000 ֆունտ ստերլինգ է աշխատավարձ, իսկ մնացածը—այսինքն ամբողջ եկամուտի գրեթե 3/4-ը շահագործող դասակարգին է բաժին ընկնում, այն է.

Կալւածավարձ—200,000,000 ֆունտ ստերլինգ

Տօկոսիք—250,000,000 » »

Կապիտալի արդիւնք—350,000,000 » »

Այդ պերճախօս թւերը ցոյց են տալիս, թէ ինչպէս աշխատաւոր ժողովուրդը քրտինք է թափում, բայց զրկւած մնում, իսկ արտօնեալ տարրերը, կապիտալիստ ու կալւածատէր դասակարգերը արդիւնքի ամենամեծ պատան են վայելում:

Եւ դա, ինչպէս ասացինք, ընդհանուր երևոյթ է բոլոր երկրների համար: Հէնց դրանից, բարիքների անարդար բաժանումից ու անգուսպ շահագործումից է առաջ գալիս չքաւորութիւն կոչւող շարիքը իր պէս-պէս ձևերով ու արտայայտութիւններով:

Սակայն շարիքի դէմ միշտ կռել-մաքառել է հարկաւոր և ոչ թէ հլու հնազանդութեամբ խոնարհել, միայն հառաչանքներով ու հեծեծանքներով բաւակա-նանալ:

Զգալ տիրող կարգերի անարդարութիւնը և անտարբեր սպասել, թէ նրանք կը փոխւեն «իրանք իրանց»,

*) Дж. Гобсонъ: «Проблемы бѣдности и безработицы».

առանց ջանքերի ու զոհաբերութիւնների—դա աւելի քան միամտութիւն է:

Տեսնել հարուստների-կապիտալիստների անգուսպ տենչը աշխատաւորներին շահագործելու վերաբերմամբ և յուսալ, թէ առանց մաքառման, մարդասիրութեան դրդմամբ ու «բարի ցանկութեամբ» կը վերանայ կամ կը սահմանափակւի նա—դա աւելի քան անմտութիւն է:

Ահա հէնց այդ գիտակցութիւնն է, որ եւրոպական աշխատաւորների շարքերը համախմբել է մի դրօշակի տակ և օրէցօր աւելի յաճախ, աւելի ազդու շեշտերով հնչեցնում է «արդարութեան, հաւասարութեան» նշանաբանը:

Ահա այդ նոյն պատճառներն ու համոզմունքներն են, որ մեզանում էլ կամաց-կամաց առաջացնում են ցանկալի հոսանքը՝ աշխատաւորների համախմբումն ու հուժկու բողոքը տիրող կարգերի, շահագործող տարրերի դէմ:

«Թշւառին թշւառն է միշտ կարեկից», ուստի և նման ցաւերի, նման շահերի օղակը պէտք է լինի առանձին անհատներին շողկապողը, նրանց համախմբողը:

Միևնոյն արհեստն ունեցող, միևնոյն պայմաններում շահագործւող բանւորներն ու արհեստաւորները պէտք է հնչեցնեն բանաստեղծի խօսքերը.

Մէկ տեղ յոզնենք, մէկ տեղ ցաննենք,

Մէկ տեղ թափենք մեր քրտինքներ...

Բայց որպէսզի այդ «քրտինքների» արդիւնքը շահագործողների բաժին չը դառնայ, որպէսզի աշխատաւորների դրութիւնը բարւոքւի, նրանք պէտք է սոգորւած լինեն մի գաղափարով, միշտ պատրաստ պէտք է լինեն համերաշխութեան դաշն կապելու, կանչելով.

Տո՛ւր ինձ քու ձեռքդ, եղբայր եմք մենք,

Որ մըրկաւ էինք գառուած.

Բաղդին ամեն ոխ շարանենդ

Ի մի համըրյր ցրենն ի բաց...

Իսկ այդ եղբայրական համերաշխութիւնը իրակա-
նութիւն կարող է դառնալ արհեստակցական միութիւն-
ների միջոցով:

II.

Բարեգործութեան եւ մարդասիրութեան դերը:—Կարնէջի:—
Արհեստակցական միութեան նշանակութիւնը գործազուրկ,
հիւսնդ եւ այլ կարիքատու աշխատատեղերի վերաբերմամբ:

Մենք տեսանք արդէն, թէ ինչպէս հարստութիւնն
ու չբաւորութիւնը, շահագործումն ու աշխատանքը իբ-
րև հակադիր հոսանքներ բաժանել են մարդկանց երկու
դասակարգի՝ ունևորների և չունևորների, շահագոր-
ծողների և շահագործւողների:

Պարզ է, ի հարկէ, որ մարդկային այդ երկու բա-
նակները իրենց սնտեսական շահերով ու սօցիալական
ձգտումներով միանգամայն տարբեր ուղիներով են առաջ
ընթանում, բազմազան ձևերով ու միջոցներով մրցում-
մաքառում են միմեանց դէմ և այդպէս էլ պիտի շարու-
նակեն, մինչև որ ընդմիջտ վերանայ հասարակական ա-
մենամեծ շարիքը՝ շահագործումը, մինչև որ աշխար-
հում տիրապետէ արդարութիւնն ու իսկական հաւա-
սարութիւնը և

Դուրս գայ կուի այդ աղմուկից, հառաչանքներից
Մեծ ու իսկական եղբայրութիւն *)...

Յուսալ, թէ հարուստների, շահագործողների դա-
սակարգը ինքնաբերաբար կըմտածէ իր զոհերի մասին,
կաշխատի թեթևացնել նրանց վիճակը—դա աւելի քան
միամտութիւն է:

Կարծել, թէ մէկի կամ միւսի մարդասիրութիւնը,
բարեգործութիւնը կարող է լուծել ամբողջ դարերի բո-
վում եփւած մարմնացած սօցիալական հարցը—դա ա-
ւելի քան լաւատեսութիւն է: 》》》

Անհատական բարի ցանկութիւնները, շահագործող
հարուստների, կապիտալիստների կողմից աշխատաւոր
դասակարգի վերաբերմամբ գործազուրկ մարդասիրա-
կան-բարեգործական միջոցները միայն փոքրիկ պալլիա-
տիւններ են, որ երբէք չեն կարող մեծ ցաւը բուժել և
արիւն քրտինքի շահագործման առաջն առնել:

Իրանք նման են այն դեղին, որ բժիշկները շատ
յաճախ նշանակում են ծանր հիւանդին թմրեցնելու, նրա
տանջանքները դէթ մասամբ թեթևացնելու համար: Եւ
դեղը թմրեցնում է, բայց ցաւը դարձեալ իր ազդեցու-
թիւնը արտայայտում է որոշ ժամանակից յետոյ:

Այն, այդպէս են նաև մասնաւոր միջոցները հասա-
րակական մեծ շարիքի վերաբերմամբ. այդպէս են բա-
րեգործութիւնն ու մարդասիրութիւնը:

Իրանք առժամանակ թեթևացնում են թշւառի վիշ-
տը, սրբում են նրա աչքերի աղի-արցունքը, բայց այդ
վշտին, այդ արցունքներին սնունդ տւող արմատը մը-
նում է իր տեղում անխոցելի, անդրդւելի:

*) Լիււիս Մօրրիսի խօսքերը. տես Проф. Толлесь: «Чу-
десный вѣкъ».

Ահա խղճուկ արհեստաւորը դեզերում է փողոցներում, նա գործ է որոնում, բայց չը կայ: Արհեստանոց է ուզում բաց անել, բայց միջոցներ չունի: Եւ դառն վիշտը սրտին անց է կացնում երկար ու սև օրերը:

Վերջապէս հարուստը, բարեգործը համնում է օգնութեան, տալիս է անհրաժեշտ օժանդակութիւնը գործիքներ ձեռք բերելու համար:

Եւ երջանիկ է աշխատաւորը. նա առժամանակ մոռանում է ցաւ ու վիշտ և գործի է կաշոււմ անսահման ոգևորութեամբ:

Բայց միթէ զբանով լուծւում է հարցը, ապահովւում է նրա ապագան:

Երբէք:

Չախորդ պայմանները, անգործութիւն, հիւանդութիւն ու այլ պատահարներ միշտ պատրաստ են խղճուկ արհեստաւորի առաջ բացւած երջանկութեան խաբուսիկ աստղը խաւարեցնել և նրան ու նրա ամբողջ ընտանիքը նորից սովի ու վշտերի գիրկը նետել:

Ուրեմն կապիտալիստների շարքերում որքան էլ առանձին անհատներ լինեն բարի, մարդասէր ձգտումներով, բայց և այնպէս դա բոլորովին մխիթարել չէ կարող զրկանքների ծովի մէջ սուղւած աշխատաւորներին. որովհետև ընդհանուր հասարակական կարգերի արդիւնքը կազմող գորգեան հանգոյցը երբէք լուծել չէ կարող կապիտալիստ անհատները բարեացակամութեամբ:

Այսպէս օրինակ Ամերիկայի հոշակաւոր միլլիոնատէր Կարնէջին իր աշխատութիւններով *) միշտ քարոզում է, թէ երբէք հարստութիւնը իբրև ժառանգու-

*) «The Embire of bussinesse»



թիւն չբախտի թողնել, այլ պիտի բաժանել բարի նպատակներով. թէ արդարութիւնը պահանջում է, որ զիջւած հարստութիւնները բաժին դառնան աշխատաւորներին: Եւ արդէն ինքը գործնականապէս կատարում է այդ քարոզները՝ օրինակ միայն մի տարում նա նւիրել է 50 միլլիօն Նոթլանդիայի համալսարանին, 50 միլլիօն Վաշինգտօնի համալսարանին, 20 միլլիօն Նիւ-Եօրքի գրադարանին, 30 միլլիօն բանւորական միութիւններին: Բայց և այնպէս նրա հայրենակից աշխատաւորները առանց մեծ նշանակութիւն տալու այդպիսի բարեգործ ձգտումներին, շարունակում են իրենց կազմակերպւած մաքառումը, որովհետև նրանք շատ լաւ հասկացել են, որ մշտական ու արմատական չէ մասնաւոր բարեգործութեան, օտարի օգնութեան արժէքն ու նշանակութիւնը:

Դրանք կարող են սու ժամանակ նպաստել մէկին կամ միւսին, բայց երբէք չեն կարող ապահովել աշխատաւորի ապագան, չեն կարող ազատել արհեստաւորին անխուսափելի հարւածներից:

Դրա համար անհրաժեշտ է մի մշտական ոյժ, կենսունակ կազմակերպութիւն, որ միշտ և ամեն քայլափոխում օգնութեան հասնի:

Իսկ այդպիսի կազմակերպութիւն կարող է լինել արհեստակցական միութիւնը, որը շողկապելով միևնոյն արհեստին պատկանող աշխատաւորներին, կանոնաւոր ընթացք կը տայ նրանց պահանջներին և տնտեսական շահերին:

— Կապիտալի ճնշումը, ասում է Արտեմ Կ-ն *) ,

*) «Какъ устраивать рабочіе союзы» եր. 4.



1649-2002 (318-59)

318-22

գործարանատիրոջ ինքնակալ կամքն ու քմահաճոյքը, նրա սոսկ դասակարգային շահը, որ բացի տնտեսական օգուտից ուրիշ ոչ մի սրբութիւն չէ ճանաչում— ահա այդ բոլորը անհրաժեշտ են դարձնում արհեստակցական միութիւնը այն բոլոր աշխատաւորներին համար, որոնք ձգտում են ձեռք բերելու գէթ մի փոքր ասնելի դրութիւն:

Եթէ այդ աշխատաւորներն անջատւած են, եթէ նրանցից իւրաքանչիւրը մտածում է միայն իր սեփական շահերի մասին, անուշադիր թողնելով իր արհեստակից ընկերների շահերը, եթէ նա պատրաստ է իր անհատական բարօրութիւնը հիմնել ընկերների դժբախտութեան վրայ, այդ դէպքում գործարանատէրը ինքնիշխան թագաւոր է իր գործարանում:

Ո՞վ կարող է նրա կամքին հակառակ գնալ, նրա խօսքը չը կատարել:

— Կամքն իմս, կապիտալն ու գործարանն իմս. ով ուզում է, թող հպատակւի, մնայ. ով չէ ուզում, բարի ճանապարհ— ահա այդ է իշխան-գործարանատիրոջ դաւանանքն ու նշանաբանը, որի առաջ միշտ էլ կը խորտակւի անհատական բողոքն ու արտունջը:

Ի՞նչ պէտք է անէ բանւորը: Նրան մնում է կամ հպատակւել առաջարկած պայմաններին, կամ հեռանալ, անգործ մնալ:

Բայց այնտեղ՝ տանը հաց ու ապրուստ են ուզում, ուրեմն նա ազատ չէ որոշում կայացնելիս. նա ստիպւած է համաձայնել, երկու շարիքներից՝ սովից ու անձեռնառ աշխատանքից՝ փոքրագոյնն ընտրել:

Այն, նա ստիպւած է այդպէս վարւել, որովհետև մենակ է և երկիւղ չէ ազդում գործարանին, որովհետև

անօգնական է և չէ կարող դիմանալ սովի, կարիքի հարւածներին, որովհետև նրա մերժած աշխատանքը մէկ ուրիշը կարող է վերցնել աւելի պակաս գնով:

Բայց եթէ նոյն արհեստի բոլոր աշխատաւորները շահկապւած են արհեստակցական միութեամբ, այն ժամանակ պատկերը բոլորովին փոխուում է:

Գործարանատէրը տեսնում է, որ իր առաջ կանգնած են ոչ թէ անհատ բանւորներ, այլ միաձոյլ կազմակերպութեան անդամներ, որոնց շահերի պահպանութիւնը ընդհանուրի պարտքն է համարուում:

— Մէկը բոլորի համար և բոլորը մէկի համար— այդպէս է միութեան նշանաբանը:

Իսկ ճի՞ կարող է դիմադրել այդպիսի նշանաբանով սողորւած միութեանը:

Նա նիւթական նոպատ կը տայ իր գործազուրկ անդամին, որպէսզի վերջինս ստիպւած չը լինի անձեռնարու պայմաններով աշխատանք վերցնելու, աշխատավարձի գները պակասեցնելու:

Նա ընկերական համերաշխութեամբ թոյլ չի տայ, որ ուրիշները մօտենան այդ գործին և այդպիսով գործարանատէրը վերջ ի վերջոյ ստիպւած կը լինի զիջել, աշխատաւորի պահանջները կատարել:

Ուրեմն ով որ ուզում է մենակ չը մնալ գոյութեան կուռում և զոհ չը դառնալ շահագործման անզուսպ հարւածներին, ով որ ուզում է յաղթող դուրս գալ տնտեսական պայքարում, նա օր առաջ պէտք է ձեռք մեկնէ իր բախտակից ու արհեստակից ընկերներին և նրանց հետ միասին կազմակերպէ ցանկալի արհեստակցական միութիւնը:

Շատ անգամ այստանում է, որ թէև գործ կայ,

բայց բազմաթիւ բանւորներ ու արհեստաւորներ պարապ ման են գալիս, որովհետեւ նրանք չեն իմանում գործի տեղը, հնարաւորութիւն չունեն այդ իմանալու...

Ի՞նչ կարող է անել խեղճ բանւորը, արհեստաւորը: Նա ձեռքը ծոցին դեպերում է այս ու այն կողմ, սրտի վիշտը պատմում է այս ու այն ծանօթին, ապարդիւն հարց ու փորձ է անում «գործի» մասին և դրանով բաւականանում:

Եւ օրերն անցնում են միմեանց յետևից, սև ու մաշող օրերը:

Եւ ընտանիքը հացի ու ապրուստի կարօտ հեծում է բախտի ծանր լծի տակ:

Սակայն այդպէս երկար շարունակել չէ կարող: Անգործ աշխատաւորը իր ընտանիքը փրկելու համար ստիպւած է կամ վաշխառուների դիմել, ծանր պայմաններով պարտք (շատ անգամ այդ էլ անհնարին է) վերցնել, կամ ամենապակաս գներով, ամենաձեռնտու պայմաններով մի աշխատանք գտնել, այսինքն անել մի քայլ, որ փասակար է բոլոր աշխատաւորների համար: Ահա թէ ինչպէս.

Եթէ բանւորը կարիքից դրդւած պակաս օրավարձի է համաձայնուում, դրանով նա հնարաւորութիւն է տալիս կապիտալիստին—գործարանատիրոջը, միւս բանւորների օրավարձն էլ պակասեցնել, աշխատանքի գինը էժանացնել:

Եթէ արհեստաւորը ստիպւած է էժան գնով ծախել իր պատրաստած իրերը, նիւթերը, կամ պակաս օրավարձով աշխատանքի մտնել—դրանով նոյնպէս փասուում է իր արհեստակիցներին:

Բայց որպէսզի այդպիսի չարիք տեղի չունենայ,

որպէսզի բանւոր ու արհեստաւոր ազատ մնան վաշխառուների լծից և սեփական ձեռքով իրենց բախտը չը սևացնեն, աշխատանքի գները պակասեցնելով, դրա համար անհրաժեշտ է նախօրօք շարկապէլ և արհեստակցական միութիւններ կազմել:

Այդպիսի միութիւնը իր յատուկ բիւրօի ու անդամների միջոցով շարունակ տեղեկութիւններ կը հաւաքէ աշխատանքի շուկայի մասին, և աւելի հեշտութեամբ գործ կը մատակարարէ աշխատազուրկներին, առանց գները պակասեցնելու: Իսկ եթէ այդ անհնարին է, այն ժամանակ նա իր գանձարանից նպաստ կամ փոխառութիւն կը տալ իր կարիքաւոր ընկերին, մինչև որ «աջողութեան դռները» բացւեն նրա առաջ:

Ահա բանւորը, արհեստաւորը գործի մէջ են, աշխատում են, արիւն-քրտինքով իրենց ընտանիքը կառավարում են: Բայց վայ նրան, ով հիւանդացու. այլ ևս չի է նրա մասին մտածողը, նրա ընտանիքի ապրուստն հոգացողը:

—Գործարանատէրը, ասում է Շիպպել *), աւելի քիչ է հետաքրքրում իր աշխատաւորների առողջութեամբ, քան հին ժամանակների ստրկատէրը իր ըստրուկների առողջութեամբ... ստրուկը իր տիրոջ հարստութեան մի մասն էր կազմում և այդ պատճառով աւելի մեծ խնամքի էր արժանանում, որպէսզի «գինը չը կորցնէ»...

Իսկ բանւորը այլ բան է. նա մի այնպիսի ապրանք է, որ շատ հեշտութեամբ կարելի է փոխարինել առանց մի որ և է կորուստ ունենալու:

*) «Профессиональные союзы рабочих» եր. 32.

Գործարանատիրոջ համար ի՞նչ փոյթ, թէ նրա աշխատաւորը հիւանդ է, բժշկութեան կարօտ է՝ հիւանդի փոխարէն նա կը հրաւիրէ առողջին և գործը նորից եռալով առաջ կը գնայ...

Այդպէս է ժամանակակից կեանքը, այդպէս է կապիտալիզմի թելադրած պայմանները: Քանի առողջ ես, քրտինք թափիր, աշխատիր, իսկ երբ հիւանդացար, գընա տանդ տանջելու...

Եւ տանջում են: Քանի, քանի արհեստաւորներ ու բանւորներ այդ վիճակում քամել են և քամում են դառնութեան բաժակը և չը կայ նրանց մասին հոգացող:

Բայց եթէ դրանք ունենան արհեստակցական միութիւն, այն ժամանակ այդ միութիւնը նախօրօք կը հոգայ, որ գործարանատէրը պարտաւորւի հիւանդութեան օրերի վարձագինը տալ, իսկ հարկաւոր դէպքում գանձարանից կը տայ հիւանդ աշխատաւորներին անհրաժեշտ նպաստը:

Նոյնը տեղի կունենայ և մահւան ու այլ պատահարների դէպքում:

Արհեստակցական միութիւնը միշտ էլ իբրև մի փրկարար հրեշտակ վրայ կը հասնի իր անդամներին օգնելու, նրանց դառնութիւնը թեթևացնելու և, ինչպէս իրաւացի կերպով նկատում է Լէբկնէխտ, նրանց տնտեսական շահերի օղակը կռանելու, որպէս զի այդ օղակով շողկապլած աշխատաւորները համերաշխ ջանքերով դիմեն միշտ դէպի առաջ, դէպի շահագործման տապալումը:

Բայց մեայն այդ չէ արհեստակցական միութեան արժանիքներն ու նշանակութիւնը:

III

Արհեստակցական միութիւնների դերը բանւորական օրը կըրճատելու, վէճեր ու թիրիմացութիւններ պարզելու եւ գործադուլներին աջող ելք տալու վերաբերմամբ:

Բաւական չէ, ի հարկէ, աշխատաւորներին միայն գործ հայթհայթելը կամ այս ու այն դէպքում նիւթական նպաստ հասցնելը: Շատ մեծ կարևորութիւն ունի նաև այն հարցը, թէ աշխատաւորը ի՞նչ պայմաններում և ի՞նչքան տևողութեամբ, այսինքն օրական քանի ժամ, պէտք է կատարէ իր ստանձնած գործը:

Պարզ է, որ որքան կարճ լինի այդ տևողութիւնը՝ որքան քիչ աշխատի բանւորը, գործակատարը, արհեստաւորը առանց, ի հարկէ, նիւթական զրկանք, ստանալու, այնքան լաւ, որովհետև նա այդպիսով աւելի ազատ ժամանակ կունենայ և դրանով հնարաւորութիւն կըստանայ աւելի խնամքով կարգաւորելու իր ընտանեկան պէտքերը, բաւարարութիւն տալու իր կուլտուրական ու այլ պահանջներին:

Բայց ի՞նչ անէ աշխատաւորը այդ նպատակին հասնելու համար:

Գործարանատէրն ու վաճառականը միշտ էլ կուզենան որքան կարելի է շատ աշխատեցնել իրենց բանւորներին, գործակատարներին, որպէս զի դրանով աւելի շատ գործ կատարեն, շատ շահ վաստակեն:

Արհեստաւորներն էլ հէնց իրենք են ստիպւած երկար ժամեր աշխատել, որպէս զի կարողանան իրենց նիւթական կարիքներին բաւարարութիւն տալ: Եւ իս-

կապէս, ներկայումս տիրող կարգերն այնպէս են, որ նրանց աշխատանքը շատ քիչ է գնահատուում, ուստի և նա ստիպւած է այդ «քչութիւնը» ժամերի շատութեամբ լրացնել:

Եւ աշխատում է նա՝ երկար ու ձիգ՝ ժամեր՝ լարւած, քրտնաթոր աշխատում: Շատ անգամ նա ամբողջ գիշերներ է լուսացնում. շատ անգամ 12—18 ժամ աշխատում, բայց և այնպէս դարձեալ չքաւորութեան ու կարիքի բեռի տակ հեծում:

Անհրաժեշտ է բանւորի ու գործակատարի, արհեստաւորի ու աշակերտի այդպիսի չարքաշութեան դէմ մաքառել:

Բայց ինչպէս...

Անհատական ջանքերը, մէկի կամ միւսի արթնացած գիտակցութիւնն ու բողոքը երբէք չեն կարող ընդհանրացած կարգերը փոխել: Իրա համար հարկաւոր է աւելի լայն ազդեցութիւն, աւելի մեծ ոյժ: Իսկ այդպիսին կարող է լինել արհեստակցական միութիւնը, որը իր մասսայական ոյժով ու բազմազան միջոցներով կարող է ազդել թէ օրէնսդրութեան և թէ հասարակական կարգերի ու հոսանքների վրայ:

Եւ իսկապէս փաստերը ցոյց են տալիս, որ քաղաքակիրթ երկրներում, որտեղ արհեստակցական միութիւններն աւելի շուտ են ծնունդ ստացել և աւելի կանոնաւորւած են, աշխատանքի տեղութեան ժամերը համեմատաբար աւելի սահմանափակ չափ ունեն և աշխատաւոր դասակարգը իր միաձոյլ շարքերով աւելի բարւոք վիճակի մէջ է դրւած, քան մեզանում:

Այսպէս օրինակ Անգլիայում «տրէդ-ունիօնների» (այդպէս են կոչւում անգլիական արհեստակցական միու-

թիւնները) ջանքերի շնորհիւ դեռ տասնեակ տարիներ առաջ արդիւնազործութեան շատ ճիւղերում մտցրած է բանւորական 10 ժամեայ, ապա 9 ժամեայ, իսկ մի քանի տեղերում նոյն իսկ 8 ժամեայ աշխատանքի օր:

Աւստրալիայում և յատկապէս նոր Զելանդիայում, նոյնպէս արհեստակցական միութիւնների ջանքերով դեռ 1901 թ. օրէնքի ուժով *) մտցրած է 8 ժամեայ բանւորական օր:

Սպանիայում նոյնպէս մտցրած է 8 ժամեայ օր պետական բոլոր արհեստանոցներում **):

Մեղանում-Կովկասում էլ բանւորական ութժամեայ օրը իրականութիւն է դարձել Թիֆլիսում 1906 թ. յուլիս ամսից հացթուխ բանւորների համար, որոնք Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարութեամբ գործադուլ անելով ստացան իրանց բոլոր պահանջների բաւարարութիւն, որոնց թւում և ութժամեայ բանւորական օր:

Նիւ-Յօրքի բանւորական բիւրօի հաւաքած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ արհեստակցական միութիւնների ջանքերի շնորհիւ բանւորական օրը տեւում է, ոչ աւելի քան...

Աւստրալիայում	8 ժամ
Անգլիայում	9 »
Հիւս. Ամերիկայում	9 ³ / ₄ »
Նօրվեգիայում	10 »
Ֆրանսիայում, Գերմանիայում և Շվեյցարիայում	10 ¹ / ₂ »
Հօլլանդիայում	10 ³ / ₄ »

*) Ю. Лавриновичъ: «Рабочіе союзы» кр. 126.
**) «Промышл. и здоровье» 1903 թ. № 5.

Իտալիայում, Աւստրիայում . . . 11 »

Իսկ մեզանում, ընդհանրապէս մանաւանդ գաւառական քաղաքներում—ինչպէս ասացինք, այդ ժամերի թիւը հասնում է երբեմն 18-ի:

Անհրաժեշտ է ուրեմն այդ շարիքի առաջն առնել և մեր աշխատաւոր դասակարգին էլ ազատ ժամեր շնորհել, որ այնքան կարևոր է նրա առաջադիմութեան համար:

Հէնց այդ նպատակով էլ պէտք է օր առաջ՝ կազմակերպել արհեստակցական միութիւններ արդիւնագործութեան ու վաճառականութեան բոլոր կենտրոններում, բոլոր ճիւղերում:

Սակայն միայն գործ որոնելու կամ աշխատանքի օրը կրճատելու հարցերը չեն, որ բաղխում են առաջացնում շահագործող և աշխատաւոր դասակարգերի միջև: Ո՛չ. բացի դրանցից կան նաև ուրիշ շատ խնդիրներ՝ աշխատավարձի վճարման ձևը, գործարանի առողջապահական պայմանները, կանանց ու փոքրահասակների աշխատանք, վարչական անձերի վարմունք, բազմազան ու բազմաթիւ պատահարներ և դէպքեր, որոնք միշտ էլ կանգնեցնում են աշխատաւորին շահագործողի դէմ ուժգին բողոքի ու մաքառման պոռտկումներ, առաջացնում գործադուլների շարժառիթը դառնում:

Գործադուլ... դա աշխատաւոր դասակարգի ձեռքում մի հիանալի միջոց է հարստահարութեան ու շահագործման սննձերը քաշելու համար, եթէ միայն կանոնաւոր ձևով է կազմակերպւած և կարող է երկար ժամանակ շարունակել առանց ընկճւելու:

Պարզ է, որ այս դէպքում էլ անհատն ու փոքրիկ խմբերը անզօր են յաղթանակ տանելու, ուստի նրանք

պէտք է օր առաջ շողկապւեն և միացած մեծ ոյժ կազմեն, որովհետև միայն այդպիսի ոյժը կարող է բարւոքել նրանց վիճակը, իրականացնել հասունացած պահանջները, յաղթական ելք տալով բողոք-գործադուլներին, որոնք վերջին ժամանակներս տնտեսական կեանքի զարգացման և շրջապատող պայմանների շնորհիւ մեզանում էլ քրօնիքական ընաւորութիւն են ստացել և հետըզհետէ աւելի ու աւելի յաճախ են կրկնւում:

Թէ տնտեսական շահեր պաշտպանելու համար որքան սզդու միջոց է գործադուլը—այդ մասին բազմաթիւ պերճախօս ապացոյցներ կան թէ մեր և թէ մանաւանդ եւրօպական կեանքից: Ահա մի նմուշ.—1889 թւականին էր: Լօնդօնի նաւահանգստի բեռնակիր բանւորները չափազանց աննպաստ պայմանների մէջ էին: Նրանք աշխատում էին օրավարձով, բայց այդ օրավարձը չէր բաւականացնում անհրաժեշտ կարիքներին անգամ:

Եւ ահա նրանք պահանջ դրին, որպէսզի իւրաքանչիւր ժամւայ համար 5 պենս աւելացնեն վարձագինը: Բայց ո՞վ էր այդ պահանջին լսողը:

Բարեբախտաբար բեռնակիրներն ունէին նախօրօք կազմած մի փոքրիկ «միութիւն»: Ահա հէնց այդ «միութիւնն» էլ ասպարէզ մտաւ իր անդամների և նրանց արհեստակիցների չէ օրը բարւոքելու նպատակով:

Յայտարարւեց գործադուլ, որը մի քանի օրում հսկայական չափերի հասաւ: 10,000 բեռնակիրներ միացան «միութեան» յայտարարած այդ գործադուլին և աշխարհի հոշակաւոր նաւահանգստում—Լօնդօնում դադարեց նաւազնացութեան հետ կապ ունեցող շարժումը:

Սակայն գործի աջողութեան համար անհրաժեշտ էին նիւթական լայն միջոցներ—գործադուլաւորներին.

պաշտպանելու համար, իսկ «միութիւնը» գուրկ էր այդ միջոցներից, ուստի և նա կոչ արեց աջակցութեան հասնելու:

Եւ հասարակութիւնը բունն արձագանք տւեց այդ կոչին: Ամեն կողմից թափւեցին նւէրները, շուտով գումարը հասաւ մօտ 500,000 ռուբլու: Միայն Աւստրալիայի բանւորական միութիւնները հեռագրով փոխադրեցին 300,000 ռուբլի իրենց արհեստակիցներին քաջալերելու համար *):

Ահա այդպիսի արհեստակցական փոքրիկ «Միութեան» ջանքերի և հասարակութեան բունն աջակցութեան շնորհիւ գործադուլը շարունակեց մի ամբողջ ամիս և աշխատաւորներին հասցրեց փառաւոր յաղթանակի: Նրանց բոլոր գլխաւոր պահանջներին բաւարարութիւն տրւեց:

Պարզ է, որ եթէ չը լինէր միութիւնը, արհեստակիցների միաձոյլ համերաշխութիւնը, այն ժամանակ գործադուլը երբէք իր նպատակին չէր հասնի և խզճուկ բեռնակիրների հաս ու կտոր բողոքները պէտք է մնային միայն «ձայն բարբառոյ յանապատի»:

Ահա հէնց այդ է պատճառը, որ քաղաքակիրթ երկրներում մի կողմից բազմանում և լայնանում են արհեստակցական միութիւնները, իսկ միւս կողմից աւելի ու աւելի յաճախ են տեղի ունենում գործադուլները իբրև անտեսական պահանջներ պաշտպանելու մի ազդու միջոց: Այդ մասին գաղափար կազմելու համար բաւական է աչքի առաջ ունենալ ֆրանսիական առևտրի

*) С. Н. В. Веб. «Исторія рабоч. движ. въ Англіи.» стр. 224.

մինխտրութեան հաւաքած վիճակագրական տեղեկութիւնները *), որոնք ցոյց են տալիս, թէ միայն 1899 և 1900 թ. թ. արհեստակցական միութիւնների նախաձեռնութեամբ տեղի են ունեցել հետևեալ քանակութեամբ գործադուլներ.

	Ո՞ր երկրում		գործադուլ		բանւորներ	
	1899 թ.	1900 թ.	1899 թ.	1900 թ.	1899 թ.	1900 թ.
Յրանսիայում	740	» 902	» 180,217	» 188,538		
Անգլիայում	719	» 648	» 176,826	» 222,714		
Գերմանիայում	1,288	» 1,437	» 99,338	» 122,803		
Աւստրիայում	311	» 303	» 54,765	» 105,128		
Իտալիայում	259	» 383	» 43 194	» 90,858		
ընդամենը		3317	3,669	554338	720,041	

Ուրեմն միայն հինգ պետութեան մէջ տեղի են ունեցել 1899 թ. 3317 և 1900 թ. 3669 գործադուլներ, մասնակցութեամբ 1899 թ. 554338 և 1900 թ. 720041 բանւորների:

Եւ զրանց ամենամեծ մասը աջող ելք է ունեցել, այն է գործադուլների մասնակցող բանւորներից իրենց պահանջներին բաւարարութիւն են ստացել՝ 20⁰/₀—լիակատար, 51⁰/₀—մասամբ, իսկ մնացածները անաջողութեան են հանդիպել: Ուրեմն երեք քառորդը աջողութիւն է ունեցել, որ չափազանց խոշոր հետևանք է, մասնաւոր եթէ աչքի առաջ ունենանք, որ անաջող գործադուլների մեծ մասն էլ բարոյական որոշ արդիւնք թողել է:

Այդպէս ուրեմն «արհեստակցական միութիւնները» անհրաժեշտ են նաև գործադուլների և ուրիշ բողոքող միջոցների աջողութեան համար:

*) «Bulletin de l'office de travail».

Աշխատիր ամառը,
Որ վայելես ձմեռը,

Ասում է Թողովուրդը, այսինքն լաւ օրերիդ ամեն շանք գործ պիւր, խնայողութիւն արա, որպէսզի սև օրերին նեղութիւն չը քաշես:

Իսկ որպէս զի այդ խելացի խորհուրդը աշխատաւորների համար էլ իրականութիւն դառնայ, հարկաւոր է, որ նրանք օր առաջ ձեռք ձեռքի տւած խմբւեն «արհեստակցական միութիւնների» դրօշակի տակ, հաւաքեն այդ միութեան գանձարաններում իրենց անդամակցական վճարները, որպէս զի գործադուլի, ձախորդութեան ու այլ սև օրերի համար նախօրօք միջոցներ ունենան և չընկճւեն, չը զիջեն...

Մի ուրիշ ֆունկցիա էլ ունի արհեստակցական միութիւնը: Նա իբրև մի ձեռնհաս մարմին կարող է միջնորդ հանդիսանալ աշխատաւորների և գործարանատէրերի միջև ծագած թիւրիմացութիւնները լուծելու և իր անդամների իրաւական շահերը պաշտպանելու համար:

Նրա այդ ֆունկցիան ոչ պակաս նշանակութիւն ունի, քան միւսները, որովհետև շատ անգամ հնարաւոր է առանց խիստ միջոցների, առանց զրկանքների ու գործադուլների իրականացնել այս կամ այն պահանջը, եթէ միայն այդ պահանջը պաշտպանող ձեռնհաս մարմին ուղեկավար կայ:

Այս խնդրում էլ խրատական փաստեր է տալիս քաղաքակիրթ երկիրների փորձը:

Այդտեղ արհեստակցական միութիւնների դերը, իբրև իրաւական միջնորդի, այնքան ազդու և նշանակալից է եղել, որ մի քանի տեղ նոյն իսկ օրէնքով հաստատւած է նա: Այսպէս օրինակ Աւստրալիայում բանւորա-

կան կուսակցութեան շանքերով վաղուց գործադրւում է այդ օրէնքը: Ամերիկայում Օյայօ և Մասսաչուզետսի կանտօններում գործադրւում է նոյնը 1886 և 1895 թւականներից: Գերմանիայում դեռ 1873 թ. գոյութիւն ունեն «հաշտարար դատարաններ» յատկապէս աշխատաւորների և կապիտալիստների համար: Ֆրանսիայում 1900 թ. սօցիալիստ մինիստր Միլերանը պարլամէնտում նոյն նպատակով մի լայն օրինագծի առաջարկը մտցրեց և այդ առաջարկն արդէն իրականանալու մօտ է *):

Իտալիայում նոյնպէս արհեստակցական միութիւնների շանքերով 1893 թ. գործադրւում են աշխատաւորների և կապիտալիստների միջնորդ դատարաններ:

Ամփոփելով մինչև այժմ առաջ բերած փաստերն ու դիտողութիւնները արհեստակցական միութիւնների մասին, աւելացնելով այդ բոլորի վրայ նաև նրանց միւս գործողութիւններն ու առաւելութիւնները, մենք տեսնում ենք, որ նրանք ամենանպատակայրմար կազմակերպութիւններն են աշխատաւոր դասակարգի շահերը պաշտպանելու համար:

Նրանք ձգտում են իրականացնելու հետևեալ նպատակները.

1. Միևնոյն աղհեստի աշխատաւորներին շողկապելով միմեանց հետ և գործնական ճանապարհով արծարծելով համերաշխութեան գաղափարը, արթնացնում է նրանց դասակարգային գիտակցութիւնը և պարզում շահագործող դասակարգերի դէմ մաքառելու անհրաժեշտութիւնը.

*) «Наша Жизнь» 1904 г. 16 дек.

2. Բազմազան միջոցներով բարւոքում է իր անդամների սօցիալական, տնտեսական դրութիւնը:

3. Չգտում է կարճացնել բանւորական օրը, այդպիսով հնարաւորութիւն տալով աշխատաւորներին աւելի երկար ժամանակ նւիրելու իրանց մտաւոր-բարոյական պահանջներին, հասարակական-ընտանեկան գործունէութեանը:

4. Վերացնում է պայմանաժամերից դուրս աշխատանքը (сверхуроч. раб.), — դրանով ազատելով աշխատաւորներին ֆիզիքական ոյժի լարւած ու անկանոն վատնումից և զբաղմունք տալով ուրիշներին — գործազուրկ բանւորներին:

5. Բարձրացնում և կանոնաւորում է աշխատավարձը, սահմանելով նրա minimum-ը՝ ամենապակաս չափը և ամեն կերպ աջակցելով նեղւած անդամներին, որպէսզի նրանք ստիպւած չլինեն պակաս վարձով աշխատել:

6. Որոնում և մատակարարում է գործ, իր անգործ անդամներին կամ նիւթական օժանդակութիւն է հասցնում նրանց:

7. Բարւոքում է գործարանների, արհեստանոցների առողջապահական վիճակը, այդ մասին պատշաճաւոր պահանջներ դնելով գործարանատերերի, կապիտալիստների առաջ:

8. Ձրի իրաւաբանական և բժշկական օգնութիւն է հասցնում թէ իր անդամներին և թէ նրանց ընտանիքներին, այդպիսով ազատելով նրանց շատ անարդարութիւններից ու դժբաղդութիւններից:

9. Անգործութեան կամ մի այլ դժբաղդութեան ժամանակ փոխառութիւն ու նպաստ է տալիս իր ան-

դամներին, որով և ազատում է նրանց վաշխառուների ազան ճիրաններից և զանազան պատահարներից:

10. Նպաստում է իր անդամների մտաւոր առաջադիմութեանը, առանձին դասընթացներ ու զբաղարաններ հիմնելով, յատուկ դասախօսութիւններ կազմակերպելով, մատչելի դրքոյիներ ու թերթեր հրատարակելով:

11. Հրատարակում ու ղեկավարում է զանազան գործադուլներ, բոյկոտ *) կամ լեբել **) գուտ տնտեսական կամ քաղաքական նպատակով, հարկաւոր դէպքում նիւթական օգնութիւն հասցնելով գործազուլաւորներին:

12. Նպաստում է քաղաքական այն կուսակցութեանը, որը իր ծրագրով ու գործունէութեամբ՝ համապատասխանում է միութեան անդամների մեծամասնութեան շահերին ու համոզմունքներին:

Ահա այդքան լայն ու բազմակողմանի են արհեստակցական միութեան նպատակները և նրանք բոլորն

*) Բոյկոտը բողոքի մի ձև է, որ լինում է անհատական կամ սպառողական: Օրինակ կարելի է բոյկոտի ենթարկել այս կամ այն կապիտալիստին, ֆասսակար մարդու, կտրելով յարաբերութիւնները նրա հետ և դրանով բարոյական ճնշում գործ դնելով: Դա անհատական բոյկոտն է: Միւսն անհատական ճնշում է, երբ արգելւում է մի որևէ գործարանի արհեստանոցի կամ վաճառանոցի ապրանքների գործածութիւնը, նոյնպէս բողոքի նպատակով:

**) Լեբելը մի նշան է, որ կայնում են որոշ արհեստների վրա, ցանկանալով նպաստել նրանց տարածմանը: Շատ անգամ բոյկոտը և լեբելը միասին են հրատարակում: Օրինակ բոյկոտի են ենթարկում մի գործարանի ապրանքները, ինչպէս Վիւսի-նը, վերջինիցս որոշ տուրք վերցնելով քիւլուտ արհեստակցական միութեան:

էլ կիրականանան, եթէ միայն աշխատաւորները զիտակ-
ցորէն համախմբեն այդպիսի կազմակերպութեան շուր-
ջը և ոչ մի եռանդ չխնայեն նրա զարգացման համար:

IV

Արհեստակցական միութիւնների աճումը քաղաքակիրթ եր-
կիրներում: Երանց անդամների համեմատական թիւը և
գործունէութեան չափը: Շիպպելի կարծիքը:

Արհեստակցական միութիւնների կարևոր դերն ու
նշանակութիւնը շատ լաւ ըմբռնել են քաղաքակիրթ եր-
կիրների աշխատաւորները: Եւ նրանք տարէցտարի ըն-
դարձակում են այդ օգտակար կազմակերպութիւնների
գործունէութիւնը, միևնոյն ժամանակ բազմացնելով ան-
դամների թիւը:

— Առանձին երկիրների արհեստակցական շարժման
զարգացման հետ, զուգընթացաբար աւելի ու աւելի է
աճում այդ երկրների միութիւնները սերտ կերպով շաղ-
կապելու և միջազգային ընտանիք կազմելու ձգտումը:
Կապիտալի դէմ մղած յամառ կռիւր մտնում է իր զար-
գացման նոր շրջանի մէջ և առանձին երկիրների ապա-
գայ ընդհանուր գործադուլները աւելի հզօր տեսքով են
ներկայանում մեզ:

Ֆրանսիայի 1906 թվականի մայիսեան տօնը ոչ
միայն տեղային բնաւորութիւն էր կրում, այլ նա շատ
հեռացել էր ֆրանսիական յեղափոխական սինդիկալիզմի
շրջանակներից: Այս նոր հոսանքը կազմակերպչական
ճանապարհով ամրապնդելու համար ստեղծւած է կենդ-

րոնական պրօֆէսիօնալ միութիւնների միջազգային սե-
կրեսարիաթը, որ 1905 թ. յունւարին հրատարակեց 1904
թ. արհեստակցական շարժման երկրորդ հաշւետուութիւնը:
Ի նկատի ունենալով հաշւետուութեան տւած տեղեկու-
թիւնների մեծ հետաքրքրութիւնը, մենք առաջ ենք բե-
րում այդ, ցոյց տալու համար արհեստակցական միու-
թիւնների ծաղկեալ վիճակը *):

Հաշւետուութիւնը պարունակում է 16 երկրների
(Անգլիա, Դանիա, Շվեդիա, Նորվեգիա, Գերմանիա, Աւստ-
րիա, Վենգրիա, Սերբիա, Բուլղարիա, Շվեյցարիա և
աւստրալիական երեք նահանգները) հաշիւները, որոնցից
երևում է, որ 1903 և 1904 թվականների ընթացքում
միութիւնների անդամների թիւը պակասել է միայն Սեր-
բիայում և Անգլիայում, առաջինում 518-ով, իսկ երկ-
րորդում 33190-ով: Իսկ ֆնացած բոլոր երկրներում ան-
դամների թիւն աճել է. օրինակ Գերմանիայում աւե-
լացել են 189,794 անդամ, Աւստրիայում—28,059, Վեն-
գրիայում—12,131, Դանիայում—3464, Շվեդիայում—
25,000 և Նորվեգիայում—231:

Արհեստակցական միութիւնների անդամների թւի
այդքան աճումը տեղի է ունեցել միայն մի տարւայ ըն-
թացքում: Իսկ եթէ համեմատութեան դնենք 1898 թ **).
և 1904 թ. տեղեկութիւնները, այն ժամանակ արագ

*) Ման. տես՝ «Трудъ» օրաթերթ 1906 թ. և «Професиональ-
ный союзъ» 1906 թ. № 16—19:

**) Այդ թվականի մային տեղեկութիւնները քաղել ենք
պրօֆ. Վ. Զօմբարտի «Dennoch! Aus Theorie und Geschichte
der gewerkschaftlichen Arbeiterbewegung» աշխատութիւնից.
Էր. 66—67:

աճման պատկերը աւելի ակներև դառնայ: Այսպէս օրինակ այդ միութիւնների անդամների թիւը եղել է.

Երկիրներ	1898 թ.	1904 թ.
Անգլիայում	1,644,591	1,889,590
Գերմանիայում	700,000	1,052,108
Ֆրանսիայում	419,761	715,576
Աւստրիայում	105,855	189,121

Արհեստակցական շարժման այդպիսի զարգացումը ինքն ըստ ինքեան մի պերճախօս ապացոյց է նրա կենսունակութեան ու օգտակարութեան:

Ներկայումս առանձին երկրների արհեստակցական միութիւններն իրանց անդամների թւով հետևեալ պատկերն են ներկայացնում.

Երկիրներ	անդամների թիւը	դրանցից կանայք
Անգլիա	1,889,590	?
Հօլլանդիա	37,221	2,680
Դանիա	89,788	?
Շվեցիա	104,999	7,012
Նօրվեգիա	16,227	?
Գերմանիա	1,446,626	?
Աւստրիա	205,651	14,415
Վենզրիա	53,169	2,099
Սերբիա	2,932	55
Բօլգարիա	1,672	27
Շվէյցարիա	41,862	?
Իտալիա	260,102	?
Սպանիա	56,900	?

Սեկրետարիատի հրատարակած ընդհանուր հաշվետուութեան մէջ տեղեկութիւններ չկան Աւստրալիայի, Ֆրանսիայի և Բելգիայի արհեստակցական միութիւնների

մասին: Այնպէս որ եթէ առաջ բերած թւերին միացնենք 95,000 բելգիական պրօֆ. միութիւնների անդամների թիւը և 715,576—ֆրանսիական միութիւններինը, համաձայն վերջին ստատիստիկայի, կըստացւի արհեստակցական շարժման հսկայական աճման լիակատար պատկերը արևմուտքում:

Վերևում յիշած երկրների արհեստակցական բոլոր միութիւնների անդամների ընդհանուր թիւը հասնում է գրեթէ հինգ միլիօնի:

Կազմակերպւած աշխատաւորներին¹⁾ այդ հսկայական բանակը իր անդամների թւի համեմատ էլ լայն գործունէութիւն է ունեցել, որի մասին գաղափար կարելի է կազմել հետևեալ աղիւսակից.

Երկիրներ	Անդամների թիւը	Տարեկան եկամուտը	Տարեկան ծախսը	Դրամարկի աճեռն դրամադուլիւր
Անգլիա	1,889,590	10,553,600 ռ.	10,159,377 ռ.	24,451,550 ռ.
Հօլլանդ.	6,682	11,545 »	37,322 »	1,430 »
Դանիա	83,643	900,355 »	350,000 »	1,000,000 »
Շվեցիա	81,736	1,200,000 »	800,509 »	300,162 »
Նօրվեգիա	16,227	150,350 »	200,916 »	150,737 »
Գերման.	1,052,108	10,000,000 »	8,738,753 »	8,109,903 »
Աւստրիա	189,121	2,250,000 »	2,100,000 »	2,754,026 »
Վենզրիա	53,169	210,000 »	300,543 »	28,699 »
Սերբիա	2,932	8,000 »	4,000 »	7,408 »
Բօլգարիա	1,672	6,264 »	6,760 »	5,088 »
Շվէյցարիա	41,862	200,608 »	150,464 »	322,736 »

Պատկերը աւելի կատարեալ դարձնելու համար վերցնենք նաև հետևեալ երկու աղիւսակը, որոնք ցոյց են տալիս, թէ իւրաքանչիւր երկրում արհեստակցական միութիւնների ձեռքով ձրքան փող է ծախսուում աշխատա-

ւոր անդամների կարիքների համար և ի՞նչ ձևով: Արհեստակցական միութիւնները ծախսել են՝

Երկերներ	Գործադուլների վրայ	Թերթերի վրայ	Ճանապարհածախս	Գործադուլների վրայ
Անգլիա	352,698 ռ.	1,080 ռ.	458,758 ռ.	3,274,293 ռ.
Հոլլանդիա	7,129 »	2,271 »	1,918 »	315 »
Դանիա	162,084 »	18,369 »	— »	230,173 »
Շվեդիա	352,369 »	10,756 »	40,849 »	8,200 »
Նորվեգիա	43,016 »	5,656 »	458 »	27,414 »
Գերման.	3,869,519 »	597,519 »	346,821 »	599,424 »
Աւստրիա	165,019 »	158,731 »	46,422 »	356,775 »
Վենզրիա	— »	25,164 »	15,736 »	50,355 »
Սերբիա	472 »	— »	220 »	208 »
Բօլգարիա	2,768 »	1,684 »	— »	1,956 »
Շվէյցարիա	17,668 »	18,668 »	4,244 »	6,300 »

	Հիւանդների վրայ	Ինվալիդների վրայ	Միութիւնների վարչութիւնների վրայ
Անգլիա	1,907,306 ռ.	473,976 ռ.	1,825,257 ռ.
Հոլլանդիա	176 »	— »	1,206 »
Դանիա	44,703 »	7,391 »	— »
Շվեդիա	2,380 »	— »	143,405 »
Նորվեգիա	13,301 »	681 »	80,445 »
Գերմանիա	916,935 »	113,626 »	21,902 »
Աւստրիա	243,772 »	67,390 »	1,092,218 »
Վենզրիա	39,417 »	60,019 »	495,445 »
Սերբիա	206 »	492 »	90,994 »
Բօլգարիա	— »	— »	1,288 »
Շվէյցարիա	30,244 »	18,328 »	16,188 »

Ահա այդքան լայն է արհեստակցական միութիւնների գործունէութեան ասպարէզը, այդքան խոշոր նւրանց կատարած դերը աշխատաւորների վիճակը բարւոքելու հարցում:

— «Արհեստակցական միութիւններին, իրաւացի կեր-

պով ասում է Շիպպել *), շատ մեծ նպատակ է վիճակել, այն է՝ նպաստել բանւորական ամբողջ շարժմանը:

Ճիշտ է, այդ շարժումը աշխատանքի պայմանների համար կուելու նեղ սահմաններից հեռուն է գնում. սօցիալական հարցը միայն ստամոքսի հարց չէ, այլ մարդկային փոխադարձ յարաբերութիւնների հարցը, որ հոգ է տանում բոլոր այն մարդկանց անկախութեան ու արժանապատուութեան մասին, որոնք ձգտում են դէպի ազատութիւն:

Բայց և այնպէս հիշեց ստամոքսի հարցն է, որ ամենից առաջ շարժում է անտարբեր մարդկանց, որոնց ամենաբարձր ձգտումները զարգանում են միայն շարժման ազդեցութեամբ: Հիշեց աշխատանքի պայմանները բարելաւող կռիւն է, որ նոյն իսկ անաջող դէպքում պրօլետարիատի շարքերում նպաստում է կարգապահութեան, արիւթեան, անձնագոհութեան և անյողոյսող համերաշխութեան զարգանալուն:

Բուրժուական մամուլը շատ անգամ յանդիմանութիւններ է կարդում, թէ գործադուլները վայրենացնում են բանւորներին, կոպիտ քայլեր են անել տալիս. բայց այդ անշուշտ պատահում է միայն ջլատած, չըկաղմակերպւած գործադուլների ժամանակ: Իսկ արհեստակցական միութիւնների կազմակերպած գործադուլները ընդհակառակը կարգապահութեան ու ինքնատիրապետութեան հիանալի դպրոցներ են եղել...

Արհեստակցական շարժումը առհասարակ պարզում ու ցոյց է տալիս բանւորներին, որ մեքենաները և տեխնիքական բարեփոխութիւնները իրանց թշնամիները չեն, այլ առաջադիմութեան գործիքներ, որ կարող են ազա-

տել նրանց շատ դժարութիւններէց, տալ ազատ ժամանակ հանգստի և զարձութեան համար...

Ընդհանուր առմամբ արհեստակցական շարժումը մի մեծ գործ է կատարում, բարձրացնելով աշխատատեւորների կեանքի տնտեսական և քաղաքական մակերևոյթը:

Նա սովորեցնում է աշխատաւորներին մտածել տնտեսական հարցերի մասին:

Նա հնարաւորութիւն է տալիս դիտելու տնտեսական կեանքի ելևէջները «խնդրանքի ու առաջարկի» դաժան իրողութիւնը:

Նա արթնացնում է աշխատաւորների համերաշխութիւնը:

Նա ամրապնդում է նրանց հաստատակամութիւնն ու անձնագործիւնը:

Ահա այդպէս արհեստակցական շարժումը այնպիսի մեծ կրթական դեր է կատարում, որ այդ տեսակէտից նրա հետ մրցել չեն կարող ոչ դպրոցները, ոչ եկեղեցիները և ոչ էլ գրողարաններն ու թանգարանները...

Ով չէ բաց անում խելքի ու բնաւորութեան այդպիսի դպրոցը արհեստակցական միութիւն: Նա մեծ յանցանք է կատարում ժողովրդի ապագայի վերաբերմամբ իսկ ով մասնակցում է այդ կրթութեան գործում, ով նպաստում է արհեստակցական շարժմանը, նա կարող է պարծենալ որ իր ոյժերի չափով աջակցում է ժողովրդական մասսայի առաջադիմութեանն ու բարեկեցութեանը:

Ուրեմն իւրաքանչիւր զխտակից անհատ, աշխատաւոր դասակարգի իւրաքանչիւր բարեկամ թող օր առաջ

քարձրացնէ իր ձայնը, մեկնէ իր ձեռքը՝ արհեստակցական միութիւններ կազմելու համար:

V

Քաղաքական կուսակցութիւնների եւ արհեստակցական միութիւնների փոխադարձ յարաբերութիւնը.—Անկուսակցական միութիւն.—Բէբելի կարծիքը.—Այդ կարծիքի էական եւ գործնական կողմը.—Կարլ Կաուցկի եւ Վանդերվելը:

Մենք արդէն տեսանք, թէ որքան կարևոր ու նշանակալից են արհեստակցական միութիւնները աշխատաւոր դասակարգի շահերի պաշտպանութեան տեսակէտից: Բայց յայտնի է, որ բացի այդ տեսակ միութիւններից, որ շատ տեղերում միայն նոր-նոր են ծնունդ տանում, կան արդէն քաղաքական զանազան կազմակերպութիւններ—կուսակցութիւններ, որոնք իրենց կէսնպատակն են դրել նոյնպէս աշխատաւոր դասակարգի շահերի պաշտպանութիւնը:

Այսպէս օրինակ մեզանում գոյութիւն ունեն մի շարք քաղաքական կազմակերպութիւններ՝ «Հ. Յ. Գաշնակցութիւն», Սօցիալ-դեմօկրատիա, «Սօց.-դեմօկրատական հայ կազմակերպութիւն», «Հնչակեան կուսակցութիւն», Սօցիալիստ յեղափոխականներ» ևյն, որոնք ունենալով ոյժերի տարբեր քանակ ու որակ, ծրագիրների ու գործողութեան եղանակի տարբեր ուղղութիւններ, իւրաքանչիւրն առանձին աշխատում է հաւատացնել, թէ ինքն է աշխատաւոր դասակարգի իսկական ընկերն ու բարեկամը, թէ ինքն է նրա պաշտպանն ու դեկավարը:

Այդպիսով անհրաժեշտորէն հարց է ծագում, թէ ի՞նչ յարաբերութիւն պէտք է ունենան արհեստակցական միութիւնները դէպի քաղաքական կուսակցութիւնները. թէ արդեօք այդ միութիւնները առ հասարակ «քաղաքականութեամբ» պարապելու են, թէ ոչ:

Եւ դա չափազանց լուրջ ու հրատապ հարց է, որի շուրջը բանակուիւ է մղուումնոյն իսկ աւելի քաղաքակիրթ երկրներում, որտեղ բանւորական շարժումն ու նրա բազմազան ձևերը վաղուց արդէն լայն չափեր են ընդունել:

—Արհեստակցական մութիւնների բուն նպատակն է, ասում են շատերը, պաշտպանել աշխատաւորի տրնտեսական շահերը, ուստի և նրանք քաղաքականութեամբ չը պէտքէ պարապեն, կուսակցական պայքարից միանգամից հեռու պէտք է մնան կամ ուրիշ խօսքով՝ նրանք պէտք է լինեն անկուսակցական:

Եւ այդ կարծիքը, ըստ երևոյթին, այնքան գրաւիչ է, որ համակրողների մի սոււար քանակ ունի թէ աշխատաւորների, թէ բուրժուաների և թէ նոյն իսկ սօցիալիստների շրջանում:

Այն, գրաւիչ է նա, եթէ միայն հնարաւոր լինէր տնտեսական շահերի պաշտպանութիւնը առանց որոշ սկզբունքների, առանց որոշ ուղղութեան ու քաղաքականութեան.

Այն, համակրելի է «անկուսակցականութիւնը», եթէ «կուսակցութիւն» խօսքի տակ ընդունելու լինենք ոչ թէ բարձր գաղափարական գործակցութիւն, ձգտում, այլ նեղ, եսական, թայֆայական հաշիւներ ու նպատակներ:

Իսկապէս եթէ ուշի ուշով վեր լուծենք իրականութիւնը, և պատռենք անկուսակցականութեան արտա-

քին խաբուսիկ քօղը, այն ժամանակ կը տեսնենք, որ պրօլետարիատի շահերի տեսակէտից անհրաժեշտ է, որ արհեստակցական միութիւնները ունենան որոշ քաղաքականութիւն և անգոյն ու անսկզբունք ուղին մի կողմ թողած, ընկնեն այն կուսակցութեան ազդեցութեան տակ, որը ամենաընդունակն ու ամենակենսունակն է աշխատաւոր դասակարգի հեռաւոր ու մօտաւոր կարիքներին բաւարարութիւն տալու նկատմամբ:

Արհեստակցական միութիւնների սնկուսակցական լինելու, ինչպէս ասացինք, կողմնակիցներ շատ կան, բայց նրանցից ամենանշանաւորը Բէբելն է, ուստի նախ լսենք նրա կարծիքը և ապա նոր անցնենք հակառակորդների աւարկութիւններին:

—«Արհեստակցական միութիւնը որքան ուժեղ է, ասում է *) նրա մէջ որքան շատ անդամներ կան համապատասխան արհեստին պատկանող բանւորներից, որքան հարուստ է դրամարկը, նոյնքան լրիւ կերպով կիրականանան նրա նպատակները... Հէնց այդ պատճառով արհեստակցական միութիւնը իբրև անվամ պէտք է ընդունէ բոլոր բանւորներին՝ առանց կրօնական, կուսակցական հայեացքների ու ազգութեան խտրութեան: Մի կաղմակերպութեան մէջ միացնել նոյն արհեստի բոլոր ընկերակիցներին, և անա սա պէտք է լինի նրա քաղաքականութեան առաջին դաւանանքը: Եւ եթէ նա խախտէ այդ սկզբունքը, անկարող կը լինի իր նպատակներն իրագործել, կամ կիրազործէ, բայց ոչ ամբողջովին»:

Սակայն այդպիսի «անկուսակցականութեան» հետ...

*) A. Bebel «Gewerkschafts-Bewegung und politische Parteien». Ռուս. թարգմ. А. Бебель: Профессиональное движение.

միասին Բէբելը յանձնարարում է արհեստակցական միութիւններին շերմ կերպով պարապել քաղաքականութեամբ:

— «Ես պնդում եմ. ասում է նա *), որ արհեստակցական միութիւնները պէտք է հեռու մնան կուսակցական քաղաքականութիւնից և կրօնական հարցերից. բայց ես պնդում եմ նոյնպէս, որ նրանք նոյնքան լայն չափով և եռանդով պէտք է զբաղւեն քանտրակայն քաղաքականութեամբ՝ այսինքն դասակարգային կուլի քաղաքականութեամբ. բոլոր այն հասարակական և տրնտեսական հարցերը, որոնք շօշափում են շատ քիչ կամ բոլոր բանւորների շահերը, պէտք է արհեստակցական միութեան քննութեանը ենթարկւեն թէ՛ մամուլում և թէ՛ ժողովներում»:

Բայց այդ դեռ բոլորը չէ:

— Արհեստակցական միութիւնը, շարունակում է Բէբել **), չը պէտք է պարապի կուսակցական քաղաքականութեամբ, բայց նրա առանձին անդամի համար կարող է հասնել մի այնպիսի բուպէ, երբ նա պէտք է իր համոզմունքներին որոշ արտայայտութիւն տայ քաղաքական կուսակցութիւնների կուուում: Բայց այս դէպքում նա ասպարէզ է գալիս ոչ թէ իբրև արհեստակցական միութեան անդամ, այլ իբրև պետութեան քաղաքացի: Ամեն անգամ, երբ ընտրութիւն է կատարում համայնքի, լանդտագի, բայխստագի համար, արհեստակցական միութեան անդամը պարտաւոր է որոշ դիրք բռնել ոչ միայն այն հարցերում, որոնք յատկապէս նրան են հետաքրքրում, իբրև արհեստակցական միու-

*) Ibid եր. 20—21:

**) Ibid եր. 25—26:

թեան անդամի, այլ և ընդհանրապէս բոլոր հերթական հարցերում, որոնք վերաբերում են նրան, իբրև համայնքի ու պետութեան անդամի, այն է՝ ժողովրդական կրթութիւնն ու բարձրագոյն դպրոցները, կրօնական խմբակները վիճակը համայնքում և պետութեան մէջ, հարկային քաղաքականութիւնը, հաղորդակցութեան ճանապարհը, բարեկարգութեան ու ապահովութեան ուսուկանութիւնը, վարչական հարկերը, աղքատների խնամատարութեան և հասարակական առողջապահութեան հոգացողութիւնը, կանանց և տղամարդկանց իրաւունքները համայնքում և պետութեան մէջ, ազրարային և արդիւնագործական քաղաքականութիւն, առևտրական, արտաքին և գաղութային քաղաքականութիւն, զօրք, նաւատորմ և այլն:

Եւ այդ բոլոր դէպքերում արհեստակցական միութեան անդամը հրապարակ պէտք է գոյ իբրև կուսակցութեան մարդ»:

Այսպէս ուրեմն «անկուսակցականութեան ամենաշերմ և միևնոյն ժամանակ ամենահռչակաւոր կողմնակիցն անգամ Բէբելը ընդունում է, որ արհեստակցական միութեան անդամները պէտք է պարապեն քաղաքականութեամբ և հետևեն որոշ կուսակցութեան տակտիկային, բայց այդ բոլորը նա քարոզում է կատարել միութիւնից դուրս՝ իբրև քաղաքացի և կուսակցութեան մարդ:

Սակայն նա բաց է թողնում այն հարցը, թէ արդեօք հէնց տնտեսական շահերի պաշտպանութիւնը հրնարաւոր է առանց «քաղաքականութեան» ու «կուսակցականութեան», թէ արդեօք հէնց միութեան ընթացիկ

հարցերում չէ՞ն բաղիւղում անդամների տարբեր համոզմունքներն ու ձգտումները:

Ճիշտ է, տեսականապէս շատ գեղեցիկ է թւում, երբ ասում են, թէ արհեստակցական միութիւնը պէտք է միմիայն իր տնտեսական հարցերով զբաղւի և ուրիշ ոչինչ: Բայց եթէ վերցնենք իրական փաստերը, եթէ մանաւանդ աչքի առաջ ունենանք մեղ շրջապատող արիւնոտ պայմաններն ու յեղափոխական մօմէնտը, այն ժամանակ կը տեսնենք, որ անհնարին է դա:

Վերցնենք մի նմուշ: Արհեստակցական միութիւնը ուզում է ութժամեայ բանւորական օրը իրականութիւն դարձնել: Անշուշտ տնտեսական պահանջ է դա, բայց եթէ հարցնելու լինէք նրա իրականացման միջոցների մասին, այն ժամանակ բոլորովին տարբեր պատասխան կըստանաք տարբեր համոզմունքների տէր անդամներից:

— Գործադուլ անենք — կառաջարկեն սօցիալիստները:

— Ո՛չ, խնդրենք «տէրերից», սպասենք — կը պատասխանեն չափաւորները — պահպանողականները:

— Ո՛չ, գործադուլը նպատակայարմար չէ, որովհետեւ իշխանութիւնը պէ՛մ է այդպիսի ցոյցերի — կառարկեն «պատրիօտների», «խսկական ուսւ մարդկանց» կամ այլ յետադիմական կուսակցութեան պատկանող մարդիկ:

Անշուշտ ձայների մեծամասնութիւնը կարող է վրձուել հարցը, բայց չէ՞ որ այդ մեծամասնութիւնը կարող է լինել ո՛չ ցանկալի ուղղութեան, կարող է միանգամայն փաստակար ընթացք տալ միութեան գործերին և այդպիսով արհեստակցական միութիւնը գիտակից յեղափոխական ճանապարհից հանել ու կանգնեցնել պահպանողական-յետադիմական ուղիի վրայ — մի բան, որ եր-

բէք ցանկալի չէ կարող համարւել պրօլետարիատի շահերի տեսակէտից:

Եւ այդպիսի հետևանքներ, այդպիսի բաղիւղումներ կարող են առաջ գալ իւրաքանչիւր քայլափոխում, միութեան վերաբերեալ շատ ու շատ հարցերում:

Ուրեմն ցանկալի է, որ արհեստակցական միութիւնը հէնց իր աջողութեան համար լինի ոչ թէ անգոյն ու անորոշ հաւաքածու — կօնգլօմերատ, այլ որոշ համոզմունքներով շողկապւած, սօցիալիստական որոշ կուսակցութեան դրօշակի տակ խմբւած մի մարմին, որ ընդունակ է միշտ ղեկավարւելու իր դասակարգային շահերի գիտակցութեամբ և պատրաստ է արձագանք տալու ընթացիկ հասարակական հարցերին, իբրև «քաղաքացի» ու «կուսակցութեան մարդ»:

Ճիշտ է, Բէբելը դէ՛մ է կուսակցական արհեստակցական միութիւններին, բայց նախ նրա քարոզած «անկուսակցականութիւնն» էլ իր էութեամբ և գործնականապէս շատ քիչ է տարբերւում «կուսակցականից» և Կերկորը՝ նրանից ոչ պակաս հեղինակաւոր ու հռակաւոր սօցիալիստներ՝ կարլ կաուցկի, Վանդերվելդ և ուրիշները բոլորովին հակառակն են պնդում և պրօլետարիատի շահերի տեսակէտից անհրաժեշտ են համարում, որ արհեստակցական միութիւնները անպատճառ լինեն կուսակցական:

Բայց նախ քան այդ հեղինակաւոր կարծիքների վերլուծմանն անցնելը, վերցնենք քաղաքակիրթ երկիրների փորձը, աչքի առաջ քաշենք վաղուց յայտնի դարձած տրեդ-ունիօնների և այլ արհեստակցական միութիւնների անցեալը, որպէսզի շօշափելի օրինակներով երևայ, թէ ինքը կեանքը ի՞նչ պատասխան է տալիս ար-

հետաակցական միութիւնների կուսակցական կամ անկուսակցական լինելու հարցին:

V I

Անգլիական տրէդ-ունիօնների անցեալից.—Անկուսակցական տրէդ-ունիօնները վերջում կուսակցական.—Պատճառները.—Արհեստակցական միութիւնները Գերմանիայում եւ սօց.-դեմօկրատիայի վերաբերմունքը.—Արհեստակցական միութիւնները Փրանսիայում, Բելգիայում եւ Աստրիայում.—Նրէական «Բունդ»-ի վերաբերմունքը:

Եթէ ուշի ուշով քննելու լինենք արհեստակցական շարժումը զանազան երկրներում բնորոշելու համար, թէ նա ի՞նչ կապ ու յարաբերութիւն ունի քաղաքական հոսանքների հետ—այն ժամանակ մեր առաջ կը բացուի մի այսպիսի պատկեր:

—Գրեթէ ամեն տեղ այդ միութիւնները առաջ են գալիս զուտ տնտեսական և իբր թէ անկուսակցական ծրագիրներով, բայց իրականութեան մէջ վերջ ի վերօոյ դառնում են և կուսակցական, և զուտ քաղաքական հարցերով պարապող կազմակերպութիւններ:

Այդ տեսակէտից մի պերճախօս ապացոյց է ներկայացնում Անգլիան իր հռչակաւոր տրէդ-ունիօններով:

Արհեստակցական այդ միութիւնները,—առաջ գալով ու զարգանալով առանձնայատուկ պայմաններում, ճիշտ է, երկար տարիներ հեռու են մնացել քաղաքական հարցերից և «անտարբեր են վերաբերւել զէպի սօցիալիստական գաղափարները նոյն իսկ այն ժամանակ, երբ

այդ գաղափարները տարածւում էին ամենաուժեղ չափով, երբ շարտիզմը և ապա հռչակաւոր ուսուպիստ Բօբէրտ Օուէի մտքերը ազդում էին ոչ միայն Անգլիայում, այլ նաև եւրոպական մայր-ցամաքի վրայ *)»:

Սակայն դա միայն ժամանակաւոր մի երևոյթ էր, որ ունէր իր շարժառիթ պատճառները և որը վերջ ի վերջոյ չքացաւ, տեղի տալով նոր—սօցիալիստական հոսանքին:

Որո՞նք էին այդ պատճառները: |||

—«Սօցիալիստական վարդապետութիւնների տարածման ժամանակաշրջանում (1850—1880 թ. թ.), ասում է պրօֆ. Վ. Զօմբարտ **), Անգլիան գտնւում էր տնտեսական ամենանպաստաւոր պայմանների մէջ: Նա տիրապետում էր համաշխարհային շուկայում և կապիտալիստները, ահագին եկամուտներ ստանալով, հաճոյքով համաձայնում էին և յամենայն դէպս չէին դիմադրում բանւորներին հովանաւորող օրէնքների հրատարակութեանը: Բանւորական միութիւնների առաջ գալը նոյնպէս նպաստեց բանւորների կեանքը բարելաւելուն: Այդ միևնոյն ժամանակ տօրիները (պահպանողականները) և վիգերը (ազատամիտները) իշխանութիւն ձեռք բերելու համար մաքառում էին միմեանց դէմ և այդ մաքառումը ստիպում էր իշխող կուսակցութեանը գանազան օրէնսդրական զիջումների միջոցով իր կողմը զբաւել ընտրող—բանւորներին: Թէև այդպիսի զրուժեան թեան բոլոր բարիքները բաժին են դառնում աշխատաւոր դասակարգի զլխաւորապէս «վերնաշերտի» հա-

*) Ю. Лавриновичъ: «Раб. союзы» стр. 139.

**) Վ. Զօմբարտ «Սօցիալիզմը և սօց. շարժումը XIX-րորդ դարում»:

մար, բայց և այնպէս «ներքնաշերտը» — այսինքն աւելի ճնշւած ու կեղեքւած մասսան անկարող էր նըպաստել սօցիալիզմի զարգացմանը հէնց այն պատճառով, որ ապահովւած բանւորները իբրև մի պատնէշ թոյլ չէին տալիս, որ սօցիալիստական զաղափարները նրանց մէջ տարածւեն: Բացի դրանից Անգլիայի պրօլետարը չափազանց ծանրաշարժ է և նեղ հայեացքների տէր սօցիալիստական կուլի տեսակէտից:

Նա ստեղծեց տրէդ-ունիօններ «ամաֆային» նեղ հիմունքներով—(այսպէս ասած՝ «հին տրէդ-ունիօնիզմ»)

—որ բաւարարութիւն էին տալիս նրա պահանջներին»: Պրօֆ. Զօմբարտի այդ կարծիքին համաձայն է նաև հռչակաւոր սօցիալիստ Կ. Կառլցկին *): Վերջինս էլ Անգլիայի արհեստակցական միութիւնների «անկուսակցականութիւնը» վերագրում է արդիւնագործութեան պայմաններին և շեշտում է այն միտքը, թէ այդպիսի ընթացքը օգտակար չէր պրօլետարիատի շահերի տեսակէտից:

— «Սակայն, շարունակում է պրօֆ. Զօմբարտ, ժամանակի ազդեցութիւնը այստեղ էլ դրեց իր դրոշմը: Այն ժամանակահատից, երբ Անգլիան կորցրեց իր գերիշխանութիւնը համաշխարհային շուկայում և աշխատանքի պայմանները վատացան, սօցիալիզմը մուտք գործեց և աշխատաւոր դասակարգի բարձր խաւերը և նոր տրէդ-ունիօնները արդէն կազմակերպւում են դասակարգային կուլի աւելի պարզ ու խիստ ձգտումով»:

Այդպիսով 80-ական թւականներին ծնունդ է առ-

*) К. Каутский: «Проф. движ. и полит. партія пролетаріата».

նում անգլիական «բանւորական անկախ կուսակցութիւնը», որ կապիտալիզմի դէմ կուելու համար բաւարար չէ համարում արհեստակցական միութիւնների «զուտ տնտեսական» միջոցները և քարոզում է քաղաքական կուլի ճանապարհը:

— Մեր դրութեան բարւոքումը հնարաւոր է միայն այն ժամանակ, ասում էին այդ կուսակցութեան անդամները, երբ մենք կունենանք իրաւունքներ և իշխանութիւն... 111

Իսկ այդ իրաւունքներն ու իշխանութիւնը ձեռք բերելու համար անհրաժեշտ էր, որ արհեստակցական միութիւնները—տրէդ-ունիօնները թողնէին իրենց անդոյն ու անսկզբունք վերաբերմունքը և հետևէին սօցիալիստական-կուսակցական որոշ քաղաքականութեան: Հէնց այդ ուղղութեամբ էլ պրօպագանդ էին անում գիտակից ոյժերը:

Եւ այդ պրօպագանդը ունեցաւ իր հետևանքը: Տրէդ-ունիօնների համագումարներում *)—1893 թ. Բելֆաստում և 1894 թ. Նօրվեչում — ձայների մեծամասնութեամբ առաջին անգամ ընդունեց զուտ սօցիալիստական մի բանաձև արդիւնագործութեան միջոցները հասարակական սեփականութիւն դարձնելու վերաբերմամբ:

Ճիշտ է, այդ բանաձևը և առհասարակ տրէդ-ունիօնների սօցիալիստական-կուսակցական այդպիսի հոսանքը մեծ խլրտում առաջացրեց պահպանողական խաւերում և հակառակ պրօպագանդ զարթեց, բայց և այն-

*) Поль де Рузье: «Профес. работ. союзы въ Англіи» Էր. 330.

պէս 1898 թ. համագումարում նորից ընդունեց բանաձև՝ հողերի և արդիւնագործութեան ու փոխանակութեան միջոցների համայնացման մասին:

Այդ նոյն համագումարում նախագահ ընտրւեց նոր հոսանքի պարագլուխ Օ. Գրէդի, որ մի փայլուն ճառով շեշտեց քաղաքական կոււի անհրաժեշտութիւնը արհեստակցական միութիւնների և առհասարակ բանւորների համար:

Եւ ինքը կեանքը ցոյց տւեց, թէ որքան մեծ է այդ անհրաժեշտութիւնը: Ժամանակի ընթացքում արէդ-ունիօնները փորձով համոզւում են, որ առանց քաղաքական-կուսակցական պայքարի անհնարին է լինում տրնտեսական շահերի պաշտպանութիւնը՝ նոյն իսկ ամենաեռանդուն ջանքերով:

Այդպիսով 1901 թ. համագումարը կազմակերպում է աշխատանքի ներկայացուցիչների կօնֆերանսը» (Great Labour Conference) և որոշում է իր սեփական պատգամաւորներն ունենալ պարլամէնտում:— բանւորական շահերը պաշտպանելու համար: 161 արհեստակցական միութիւններ— 969,000 անդամներով ընդունում են այդ որոշումը, այսինքն անհրաժեշտ ու նպատակայարմար են համարում քաղաքական—կուսակցական ընթացքը:

Սկզբում հազիւ հնարաւոր եղաւ միայն 4 ներկայացուցիչներ անցկացնել պարլամէնտ, իսկ վերջին ընտրութիւնների ժամանակ (1906 թ.)— դրանց թիւը 40-ից աւելի էր:

Ահա այդպիսով տասնեակ տարիներ «չէզոք-անկուսակցական» քաղաքականութեան հետևող անգլիական արհեստակցական միութիւնները՝ արէդ-ունիօնները վերջի վերջոյ խոնարհոււմ են կեանքի անողոք պահանջի ա-

ռաջ և պարզում են «քաղաքական-կուսակցական» դրոշակը և այդ նշանաբանով մի քանի տասնեակ ներկայացուցիչներ են նստեցնում պարլամէնտում իբրև պաշտպաններ իրենց դասակարգային շահերի:

Այդպէս է Անգլիայում: Այժմ տեսնենք, թէ ինչ պատկեր է բացւում Գերմանիայում:

Գերմանական արհեստակցական միութիւնները կարելի է բաժանել երկու խոշոր կարգերի. 1) Հիրշ-Գունկերեան արհեստակցական միութիւններ, որոնք ծնունդ են ստացել 1868 թ. սկսած և գտնւում են «առաջադիմական կուսակցութեան» ազդեցութեան տակ և 2) սօցիալ-դեմօկրատիական, որ սկզբներում ունէր նոյնպէս երկու հոսանք՝ լասսալական «արհեստակցական ընկերութիւններ»:

Ուշագրաւն այն է, որ Անգլիայում արհեստակցական միութիւնները առաջ են գալիս անկախ կերպով և երկար պատմութիւն անցնելուց յետոյ միայն ձգտում են սօցիալիստական դրօշակի տակ մտնել, քաղաքական ընթացք ընդունել. իսկ Գերմանիայում նրանք գոյութիւն են ստանում իբրև լրացուցիչ մասը քաղաքական կուսակցութիւնների: Այսպէս սօցիալ-դեմօկրատների սահմանադիր ժողովում (Էյզէնախ, 1869 թ.) «բանւորների միջազգային ընկերութիւնը» իր գեկուցման մէջ շեշտում է ի միջի այլոց հետևեալը *).

— «Արհեստակցական միութիւնները, իբրև կուսակցական կազմակերպութեան գլխաւոր մասնիկներ, իրենց արհեստակցական շահերի տեսակէտից կենտրոնական

*) I. Шмөле; «Соц.—дем. профес. союзы вь Германіи» 4. I Կր. 62.

վարչութիւնների միջոցով մշտապէս յարաբերութիւն պահպանելով բոլոր երկրների արհեստակից եղբայրներին հետ, պէտք է միշտ անջրի անաջ ունենան միջազգային շահերը և իրենց ձգտումները համաձայնեցնեն վերածնութեան կուսակցութեան ընդհանուր նպատակներին հետ»:

Հէնց այդ ուղղութեամբ էլ կազմակերպւում են մարքսիստական արհեստակցական միութիւնները:

Մի տարի յետոյ— 1870 թ.— Շտուտգարտում գումարւած սօց. դեմօկրատիական համագումարում Իօրկը, գեկուցում տալով դրանց մասին, ի միջի այլոց ասում է *).

— «Սօցիալ-դեմօկրատիական կուսակցութիւնը ձգտում է կարծիքներ լուսաբանել և սկզբունքներ հաստատել, ուստի և արհեստակցական միութիւնները նրա ձեռքում ծառայում են իբրև միջոց քաղաքական ազդեցիկայի համար»:

Այս խօսելով նաև միևս կուսակցութիւնների արհեստակցական միութիւնների մասին, և շեշտելով այն միտքը, թէ անհրաժեշտ է կռուով մաքառելով ձգտել իրաւունքներ ձեռք բերելու, հեղինակը եզրափակում է իր գեկուցումը այսպիսի խօսքերով.

— Կռի ընթացքում արհեստակցական միութիւնները կը ծծեն սօց.-դեմօկրատիական «թոյնը» և այն ժամանակ արձագանք կը տան մեր կողմին. «պրօլետարներ բոլոր երկրների միացէք»:

Տարիներն անցնում են միմեանց յետևից. արհեստակցական միութիւնները տարածւում ու զարգանում են անա 1875 թ. Գօտայում տեղի է ունենում նրանց

*) B. Meyer: «Emanzipations kampf», էր. 247:

ներկայացուցիչների համագումարը, որ խորհրդակցելով արհեստակցական միութիւնների քաղաքական-կուսակցական դերի մասին, կայացնում են այսպիսի որոշում *).

— «Արհեստակցական միութիւնների անդամները պէտք է հեռացնեն քաղաքականութիւնը արհեստակցական կազմակերպութիւններից, բայց դրա փոխարէն նրանք պէտք է միանան Գերմանիայի սօցիալիստական բանւորական կուսակցութեանը, որովհետև միայն նա կարող է լիովին բարւոքել բանւորների տնտեսական—քաղաքական վիճակը»:

Եւ այդ որոշումը դառնում է նշանաբան ապագայի համար: Արհեստակցական միութիւնների ամենամեծ մասը թէև ազատ ու անկախ ձևով է կազմակերպւում, բայց de facto ընկնում է սօց.-դեմօկրատական կուսակցութեան ազդեցութեան տակ և այդպիսով իրականապէս դառնում է կուսակցական:

Վիճակագրական տեղեկութիւններից երևում է **), որ անցեալ 1905 թ. Գերմանիայում սօց.-դեմօկրատական կուսակցութեան գրօշակի տակ կազմակերպւած արհեստակցական միութիւններն ունեցել են 1,250,000 անդամ, Հիւրշ-Գունկերեան արհեստ. միութիւնները— 110,000 և քրիստոնեայ-սօցիալիստական միութիւնները — 107,000.

Թէև նոյն իսկ սօցիալ-դեմօկրատների շարքերից շատ յաճախ լուել են ձայներ, թէ արհեստակցական միութիւնները պէտք է լինեն անկուսակցական, «թէև Բէէբել և Մօլկենբուր դեռ 1893 թ. շեշտել են նոյն կար-

*) «Union» 1875, № 16:

**) В. Тотоміанць «Формы раб. движенія» էր. 102.

ծիրը, բայց ինչպէս նկատում է Հ. Շարէբելը *), կուսակցութեան անդամների մեծամասնութիւնը, ինչպէս նաև իրենք արհեստակցական միութիւնները դէմ են եղել այդ կարծիքին: Փորձը ընդհակառակը ցոյց է տւել, որ «ազատ» արհեստակցական միութիւնները և սօցիալ-դեմօկրատական կուսակցութիւնը կապւած են միմեանց հետ ամենասերտ կապերով: Շարժման երկու մասերում էլ աշխատում են նոյն մարդիկ... Կուսակցութիւնը միշտ համարել է արհեստակցական միութիւնները իր հարազատը և հնարաւոր դէպքերում միշտ պաշտպանել է նրանց: Եւ ընդհակառակը՝ արհեստակցական միութիւններն օգտւել են ամեն մի առիթից, որպէսզի ագիտացիա մղեն յօգուտ սօց.— դեմօկրատիայի՝ իրենց մամուլում, ճառերի մէջ, ժողովներում և ընթացիկ կեանքում: Բանւորական շարժման այդ երկու մասերն էլ եռանդուն կերպով պաշտպանել են միմեանց և իւրաքանչիւրը լրացրել է միւսի թերութիւնները: Եւ այն փաստը, որ երկուսն էլ 1893 թ. մինչև այժմ շատ աճել ու զարգացել են, ապացոյց է, որ նպատակայարմար է գոյութիւն ունեցող փոխադարձ կապը կուսակցութեան և արհեստակցական միութիւնների միջև»: Այսպէս ուրեմն Գերմանիայում էլ կեանքը ցոյց է տւել, որ արհեստակցական միութիւնների կուսակցական լինելը և անհրաժեշտ է և օգտակար:

Գերմանիայից անցնելով հարևան Փրանսիա մենք հանդիպում ենք նոյն երևոյթին:

—Քաղաքական կուսակցութիւնները, ասում է Լաւ-

*) «Проф. движение и социаль-демократія» էր. 3:

ըինօվիչ *), ոչ մի երկրում այնքան ազդեցութիւն չեն ունեցել արհեստակցական միութիւնների վրայ, որքան Ֆրանսիայում... Թէև Ֆրանսիական բանւորների առաջին համագումարը (1876 թ.) որոշեց, որ արհեստակցական միութիւնները անգլիական տրէդ-ունիօնների նրման չը պարապեն քաղաքականութեամբ, բայց հետևեալ համագումարներում 1878 թ.—Լիօնում և 1879 թ.—Մարսելում կոլլէկտիվիստների կուսակցութիւնը ուժեղ ազդեցութիւն ձեռք բերեց և որոշեց, որ արհեստակցական միութիւնները լինեն քաղաքական-կուսակցական և մասնակցեն քաղաքական ընթացիկ հարցերին:

Դրանից յետոյ ֆրանսիական արհեստակցական միութիւնների վերաբերմունքը դէպի քաղաքական կուսակցութիւնները ենթարկւեց մի քանի ել և էջների, հետըզհետէ աւելի ու աւելի թեքւելով դէպի ձախ,—և այժմ նրանց ամենամեծ մասը ձուլւած են սօցիալիստական կուսակցութիւնների հետ կամ գտնւում են նրանց ամենալայն ազդեցութեան տակ:

Այս կուսակցութիւններն արհեստակցական միութիւնների վերաբերմամբ ունեցած իրենց ազդեցութեան համեմատ հետևեալ կարգով են դասաւորւած **).

—1. Ֆրանսիական բանւորական կուսակցութիւն— (Parti ouvrier francais),—այսինքն մարքսիստներ, որ իրենց պարագլխի՝ Պ. Գեդի անունով կոչւում են նաև գեդիստներ:

2. Բանւորական սօցիալիստների դաշնակցութիւն Ֆրանսիայում (Fédération des travailleurs socialistes

*) Ю. Лавриновичъ: «Рабочіе союзы» էր. 89.

**) В. Кулеманъ: «Профес. движение» էր. 92.

en France), որ պարագլուխ Պօլ Բրուսսի անունով կոչ-
ւում են նաև Բրուսսիստներ:

3. Սօցիալիստ-յեղափոխական բանւորների կուսակ-
ցութիւն (Parti ouvrier socialiste révolutionnaire), որ
պարագլուխ ժան Ալլեմանի անունով կոչւում է նաև
ալլեմանիստների կուսակցութիւն:

4. Անարխիստներ, որ ամեն կերպ աշխատում են
իրենց ազդեցութեանը ենթարկել արհեստակցական միու-
թիւնները՝ բանւորներին քաղաքականապէս դաստիարա-
կելու համար:

5. Անկախ սօցիալիստներ (socialistes indépendants),
որոնց նշանաւոր պարագլուխներն են Ժօրէս, Միլերան
և Վիլիհանի:

6. Բլանկիստներ, որ յայտնի են «Comité revolu-
tionnaire («Յեղափոխականների կոմիտէ») անունով: Այս
կուսակցութեան կարծիքով արհեստակցական միութիւն-
ների գործունէութիւնը պէտք է բաժանւած լինի քա-
ղաքականութիւնից և առհասարակ նրանք պէտք է լինեն
անկուսակցական:

Բացի այդ վեց կուսակցութիւնների ազդեցութեան
ենթարկւած արհեստակցական միութիւններից, Ֆրանսի-
այում կան նաև անկախ, անկուսակցական միութիւն-
ներ, բայց դրանց թիւը չափազանց չնչին է:

Բնագիտում նոյնպէս արհեստակցական միութիւն-
ների ամենամեծ մասը ենթարկւած է սօցիալիստական
կուսակցութեան ազդեցութեանը.

— Հանքաբանւորների միութիւնը, ասում է Վան-
դերվելդ *), որ կազմակերպւած արհեստակցական միու-

*) Զ. Вандервельдъ: «Профес. союзы въ Бельгии» էր. VІ.

թիւնների գրեթէ կէսն է կազմում, բաղկացած է սօ-
ցիալիստ բանւորներից, որոնց մեծամասնութիւնը պա-
կանում է բանւորական կուսակցութեանը: Նրանց բոլոր
ղեկավարները սօցիալիստ պաագամաւորներն են կամ
ազիտատօրները...

Զը նայելով մի քանի բացառութիւններին, անհր-
քելի է այն փաստը, որ Բելգիայում արհեստակցական
շարժման բուն կենտրոնը միացած է բանւոր դասակար-
գի քաղաքական շարժման հետ:

Անգլիական ձևի արհեստակցական միութիւնները
փոքրամասնութիւն են կազմում և հետզհետէ ընկ-
նում են:

Առհասարակ Բելգիայում բոլորովին, կամ գրեթէ
բոլորովին գոյութիւն չունեն չեզոք—անկուսակցական
արհեստակցական միութիւններ այն մտքով, ինչպէս անգ-
լիական տրէդ-ունիօնիստներն են կամ Ֆրանսիական հա-
կապարլամենտարիստները»:

Աստորիայում արհեստակցական շարժումը շատ նը-
ւազ չափով է զարգացած, բայց և այնպէս եղած միու-
թիւնների մեծ մասը կուսակցական բնոյթ են կրում:
Դեռ 1893 թ. Վիէննայում տեղի ունեցած արհեստակ-
ցական միութիւնների ներկայացուցիչների համագու-
մարում ընդունեց մի բանաձև *), որի մէջ ասւած է.

«Կոիւր աջող կերպով առաջ տանելու համար չը
պէտք է մոռանալ նաև քաղաքականութիւնը, իբրև մի-
միջոց նպատակի հասնելու համար: Այդ պատճառով ար-
հեստակցական միութիւնները պէտք է ամբողջապէս
կանգնեն սօցիալ-դեմօկրատիական հիմունքների և նրա-

*) В. Кулеманъ. էր. 100 և 103.

սկզբունքների վրայ», այսինքն նրանք պէտք է լինեն կուսակցական.

Կարծում ենք եւրոպական քաղաքակիրթ երկիրների այդքան պերճախօս փաստերը բաւական են:

Ինչպէս տեսանք, նրանք բոլորն էլ գալիս են մեզ ասելու, որ արհեստակցական միութիւնները հէնց իրենց շահերի տեսակէտից պէտք է զբաղւեն «քաղաքականութեամբ», իսկ դրա համար պէտք է համախմբւած լինեն իրենց համոզմունքներին ու ձգտումներին համապատասխանող սօցիալիստական կուսակցութեան դրօշակի տակ:

Հէնց այդ միևնոյն սկզբունքով է դեկավարւում նաև ռուսական արիւնտ միջնորդութեամբ գործող հրէական յայտնի սօցիալիստական կազմակերպութիւնը — «Բունդը»:

Նա, աչքի առաջ ունենալով հրէայ պրօլետարիատի դասակարգային շահերը և շրջապատող պայմանները միշտ էլ խօսքով ու գործով շեշտել է, թէ անհրաժեշտ է արհեստակցական միութիւնները կազմակերպել կուսակցական հիմունքներով, թէ չեզօք և անկուսակցական միութիւնները մանաւանդ ներկայ յեղափոխական պայմաններում անկարող կը լինեն ցանկալի զարգացում ու աջողութիւն ունենալ և աշխատաւորների հրատապ պահանջներին բաւարարութիւն տալ:

Դեռ անցեալ տարի աշնանից, երբ արհեստակցական շարժման հոսանքը ուժգին յորձանքներով անցնում էր Ռուսաստանի մէկ ծայրից մինչև միւսը, երբ ամեն տեղ աշխատաւորները համախմբւում էին ու նոր արհեստակցական միութիւններ կազմում — ահա այդ շրջանում «Բունդը» որոշ կերպով յայտնեց իր կարծիքը, թէ այդ միութիւնները պէտք է լինեն կուսակցական:

Եւ հէնց այդ ժամանակ էլ տեղի ունեցաւ հետևեալ խրատական փաստը *):

— Վիրնայում տպարանական և կազմարարական բանւորները որոշում են կազմել արհեստակցական միութիւն: Սկսւում է ուժեղ պայքար: Մի մասը պնդում է, որ միութիւնը պէտք է լինի անկուսակցական, իսկ միւս մասը շեշտում է, թէ աւելի նպատակայարմար է հէնց «Բունդի» սօցիալիստական-յեղափոխական դրօշակի տակ կազմել այդ միութիւնը:

Պայքարի հետևանքը լինում է պառակտում: 300—400 բանւորներ համախմբւում և կազմում են անկուսակցական միութիւն, իսկ 500 բանւորներ էլ կուսակցական — բունդիստական միութիւն: Արհեստակցական այդ երկու միութիւնն էլ ամենաեռանդուն կերպով ըսկըսում են գործել:

Եւ ի՞նչ: Երբ յեղափոխական կարմիր օրերին յաջորդում են ըհակցիայի սև օրերը, երբ խիստ հալածանքները, աքսորները բանտարկութիւններն ու կախաղանները ահ ու սարսափ են տարածում ամեն կողմ և ջլատում աշխատաւոր դասակարգի ոյժերը, Վիրնայի նորակազմ «անկուսակցական միութիւնը» քայքայւում է և վերջ դնում իր գոյութեանը. իսկ «կուսակցական-բունդիստական միութիւնը» շնորհիւ «Բունդի» ջանքերի ու հովանաւորութեան անընդհատ, անվհատ շարունակում է իր ընթացքը և այժմ նա արդէն մի պատկառելի կազմակերպութիւն է դարձել, որ ամեն կերպ նպաստում է իր անդամների տնտեսական, քաղաքական ու կրթական վիճակի բարւոքմանը:

*) «Голосъ», 1906, № 13.

Պարզ է, ի հարկէ, որ այդպիսի ազդու օրինակը մի խթան պէտք է դառնար հրէայ պըօլետարիատի համար և նա զանազան վայրերում արդէն կազմակերպում է արհեստակցական միութիւններ նոյն հիմունքներով—այսինքն կուսակցական նշանաբանով:

Ներկայումս «Բուռզը» թէև պաշտօնապէս միացած է Ռուսաստանի սօց.-դեմօկրատիական կազմակերպութեան հետ, բայց և այնպէս հակառակ վերջինիս տակտիկային դարձեալ կողմնակից է արհեստակցական միութիւնների կուսակցականութեան:

1906 թ. սկզբում Պետերբուրգում տեղի ունեցած «արհեստակցական միութիւնների ներկայացուցիչների երկրորդ համագումարում» Վարշաւայի բունդիստական միութիւնների ներկայացուցիչը պարզապէս շեշտում է*), որ իրանց շրջանում արհեստակցական միութիւնները կուսակցական են և դա աւելի քան նպատակայարմար ու օգտակար է եղել սօցիալիստական տեսակէտից:

Կեանքի, իրականութեան փորձերի այդքան խրատական օրինակները բաւարար համարելով, այժմ անցնենք հարցի զուտ տեսական կողմին և տեսնենք, թէ ինչո՞ւ իսկապէս անհրաժեշտ է, որ արհեստակցական միութիւնները լինեն կուսակցական:

*) «Вторая конференция профессиональныхъ союзовъ» տես. երես 101.

VII

«Անկուսակցականների» կարծիքը.— Փամանակակից կարգերի ազդեցութիւնը.— Թիֆլիսի գործակատարների օրինակը.— Յայտնի սօցիալ-դեմօկրատների կարծիքը.— Հայնրիխ Շտրէբել և Էմիլ Վանդերվելը:

»

—Արհեստակցական միութեան նպատակն է պաշտպանել իր անդամների զուտ տնտեսական շահերը, ուստի և նա հեռու պէտք է լինի կուսակցական քաղաքականութիւնից, իսկ նրա իւրաքանչիւր անդամը իբրև քաղաքացի կարող է ցոյց տալ իր վերաբերմունքը դէպի բնութացիկ քաղաքական հարցերը «միութիւնից» դուրս. նա կաշող է պատկանել այս կամ այն կուսակցութեանը.

Ահա այդ է «անկուսակցականների» կարծիքի հիմնաքարը, այդ է նրանց առարկութեան quintessence-ը:

Սակայն հարցը հէնց նրանումն է, որ տնտեսական ու քաղաքական շահերը, այժմեան պայմաններում, մաուր քաղաքական շահերը, այժմեան իրականութեան մէջ, գրեթէ նաւանդ մեր արիւնոտ իրականութեան մէջ, գրեթէ միշտ էլ շողկապւած են միմեանց հետ: Շատ անգամ ուղղակի անհնարին է որոշել, թէ որտեղ է վերջանում տնտեսական շահը և որտեղ սկսում քաղաքականը, ուստի և արհեստակցական միութեան անդամը անկարող է լինում որոշել իր վերաբերմունքը մէկի կամ միւսի նըկատմամբ: Ուրիշ խօսքով ասած՝ նա չէ կարող որոշել, թէ ինչ չափով պիտի սահմանափակւի իր համոզմունքների արտայայտութիւնը և ակտիւ մասնակցութիւնը ար-

հետաակցական միութեան մէջ և ի՞նչ չափով կուսակցութեան մէջ:

Օրինակը վերցնենք հէնց մեր մօտիկ իրականութիւնից: Թիֆլիսի գործակատարները, ցանկանալով իրենց աշխատանքը միայն 9 ժամով սահմանափակել, որոշել էին խանութները փակել երեկոյեան ժամը 6-ին: Եւ այդ նշանաբանով էլ գործադուլ սկսեցին:

Իսկ անշուշտ անտեսական պահանջ էր — հետևապէս գործակատարների միութեան ենթակայ: Բայց տեսէք ի՞նչ հետևանք ունեցաւ այդ «անտեսական» պահանջը. խանութատէրերը համաձայնեցին գործակատարների ցանկութեանը, բայց իշխանութիւնը միջամտեց և հրամայեց, որ ոչոք չը համարձակւի երեկոյեան ժամը 8-ից շուտ փակել խանութը:

Այդպիսով դուռ անտեսական գործադուլը դարձաւ քաղաքական:

Այդ դէպքում ի՞նչ դիւք պէտք է բռնէին գործակատարները, իբր «անկուսակցական միութեան» անդամ. եթէ նրանք հետևելու լինէին «անկուսակցական» իդիօլօգներին խորհրդին, պէտք է գործադուլը շարունակելու կամ ընդհատելու հարցը դրանից յետոյ քննութեան ենթարկէին ոչ թէ միասին, «միութեան» մէջ, այլ առանձին-առանձին իբրև «կուսակցութեան» անդամ և այդպիսով արտաքին «միութիւնը» պէտք է քանդէր և տեղի տար զատ-զատ հոսանքների տարբեր կուսակցութիւնների, գուցէ և տարբեր որոշումներով: Այսինքն «Անկուսակցական» անունը ինչպէս այս, նոյնպէս և ուրիշ շատ ու շատ դէպքերում չէ կարող տարբեր համոզմունքներին ու դաւանանքներին միևնոյն ընթացքը տալ:

Նրանցից իւրաքանչիւրը կարտայայտուի համապատասխան կուսակցութեան դրօշակի տակ:

Պարզ է, ուրեմն, քանի որ տիրող կարգերը և բիւրօկրատական բռնակալութիւնը սերտ կերպով շողկապել են անտեսական և քաղաքական հարցերը, քանի որ այդ հարցերի շուրջը գոյութիւն են ստացել տարբեր համոզմունքներ և իբրև արդիւնք այդ համոզմունքների կազմակերպւել են տարբեր քաղաքական կուսակցութիւններ տարբեր նշանաբաններով, ուստի և ինքնախաբէութիւն է կարծել, թէ արհեստակցական միութիւնները կարող են de facto, իրականապէս լինել «անկուսակցական»:

Եթէ նոյն իսկ հնարաւոր լինէր բառի բուն նշանակութեամբ «անկուսակցական» դարձնել արհեստակցական միութիւնները. այնուամենայնիւ դա ցանկալի չէ իբրև պրօլետարիատի շահերին վնասակար մի երևոյթ:

Իսկ մի պարզ ճշմարտութիւն է, որի մասին շեշտել են արդէն ոչ թէ բուրժուա իդէօլօգներ, այլ հէնց իրենք՝ ժամանակակից սօցիալ-դեմօկրատիայի լաւագոյն ուսուցիչները:

Ուրեմն հետևենք Սպինօզայի խորհուրդին՝

Ոչ լալ, ոչ խնդալ, այլ միայն հասկանալ, և լսենք դրանց. — «Չէ կարելի սպասել, ասում է յայտնի սօցիալ-դեմօկրատ Շտրէքսլ *) որ հետևողական սօցիալ-դեմօկրատը արհեստակցական միութեան մէջ յետ մնայ քաղաքական պրօպագանդից — (նոյնպէս և ուրիշ կուսակցութեան անդամները): Բացի դրանից արհեստակցական միութիւնները իբրև այդպիսին, իրենց անդամների դուռ

*) Г. Штребель. «Профес. движение и социаль-демократія».

տնտեսական շահերը պաշտպանելիս անկարող են խուսափել քաղաքականութիւնից: Նրանք ամբողջապէս շահախնդրած են սօցիալական օրէնսդրութեամբ, օրինակ, նրանք անկարող են անուշադիր թողնել հարկերի, մաքսային տուրքերի, միլիտարիզմի, արտաքին քաղաքականութեան և այլ նմանօրինակ հարցերի վերաբերեալ հոսանքներ: Իսկ պարապել այդպիսի քաղաքական հարցերով առանց պարզելու որոշ վերաբերմունք դէպի քաղաքական կուսակցութիւնները, այսինքն առանց կուսակցական քաղաքականութեան անհնարին է:

Չէ որ գործնական հետեանքների հասնելու համար բաւական չէ միայն ձեռնկերպել արհեստակցական միութեան պահանջները:

Չէ որ միութիւնները պէտք է վերահսկեն կուսակցութիւնների վերաբերմունքի վրայ դէպի այդ պահանջները, պէտք է քննադատեն նրանց աշխատանքը... Վերջի վերջոյ բնական է, որ նրանք պէտք է դիմեն կուսակցական քաղաքականութեան:

Իսկ հրաժարելով այդպիսի կուսակցական քաղաքականութիւնից, որ անհրաժեշտ է խելամիտ արհեստակցական շարժման շահերի տեսակէտից, միութիւնները կը վնասեն ոչ միայն արհեստակցական շարժմանը, այլ և կուսակցութիւններին:

Ձուտ արհեստակցական շարժումը առանց տողուրելու սօցիալիզմի դադափարներով, չէ կարող միացնել աշխատաւորներին իբրև մի դասակարգ բուրժուազիայի դէմ: Ընդհակառակը նա բաժանում է այդ աշխատաւորներին առանձին խմբակների նրանց արհեստների համեմատ, իսկ այդ խմբակների անդամների շահերը երբեմն տարբեր են լինում...»

Պարզ է ուրեմն, որ ձգտել արհեստակցական միութիւնները կազմակերպել անկուսակցական նշանաբանով — կը նշանակէ բաց է ի բաց վնաս հասցնել նրանց զարգացմանը և առհասարակ պրօլետարիատի դասակարգային կուին:

— Իսկ որպէսզի այդ տեղի չունենայ շարունակում է Շտրեբել, պէտք է արհեստակցական միութիւնները և կուսակցութիւնը կազմեն մի անբաժանելի ամբողջութիւն, փոխադարձաբար պաշտպանեն: ու լրացնեն միմեանց և միասին ծառայեն մի ընդհանուր նպատակի, այն է՝ ազատեն աշխատաւոր դասակարգը կապիտալիստական լծից»:

Այդ միեւնոյն կարծիքին է նաև բէլգիական սօցիալիստների յայտնի պարագլուխը — Վանդերվելը*):

Շեշտելով այն իրողութիւնը, որ Բէլգիայում գրեթէ բոլորովին գոյութիւն չունեն անկուսակցական արհեստակցական միութիւններ, որ եղածները գրեթէ բոլորն էլ կուսակցական են, նա աւելացնում է.

— Մեր ընկերներից շատերը հարց են տալիս, թէ արհեստակցական և նոյն իսկ սօցիալիստական շարժման տեսակէտից արդեօք աւելի լաւ չի՞ լինի պրօլետարիատի արհեստակցական կազմակերպութիւնը բաժանել նրա քաղաքական կազմակերպութիւնից...»

Որոշ միջավայրում տակտիկական չեղօքութիւնը գուցէ կարողանայ բարերար հետեանք տալ: Այդ պատճառով մենք անսլայման կերպով չենք դատապարտում անկուսակցականութիւնը, բայց միւս կողմից պէտք է ասենք, որ նա — արհեստակցական միութիւնների անկուսակցականութիւնը մեզ վտանգ է ներշնչում **):

*) Э. В. «Профес. союзы въ Бельгии.
**) Ընդգծումը մերն է:

Ուրիշ երկրների օրինակը իսկապէս ցոյց է տալիս. թէ կուսակցական և թէ քաղաքական գործունէութեան համար սրբան անտանելի հետեանքներ են ստացուում, երբ պիտի միջապատ է առաջանում պրօլետարական գործունէութեան այդ երկու անհրաժեշտ ձևերի միջև: Նոյն իսկ անգլիական տրեդ-ունիօնիստները այդ ուղղութեամբ երկար փորձից յետոյ սկսել են հասկանալ, որ անհրաժեշտ է տնտեսական գործունէութիւնը միացնել անկախ քաղաքական կուլի հետ»:

Հէնց այդ պատճառով էլ բելգիական սօցիալիստների սուտար մեծամասնութիւնը Վանդերվերդի հետ միասին կողմնակից են կուսակցական քաղաքակրթութեան, այսինքն շեշտում են, թէ արհեստակցական միութիւնները պէտք է լինեն կուսակցական:

«Այդպէս է մեր տակտիկան, եզրափակում է իր խօսքը Վանդերվերդը, և մինչև որ միւս տակտիկան չը տայ աւելի լաւ արդիւնքներ, մենք մեր տակտիկան չենք փոխի»:

Այժմ լսենք, թէ նոյն հարցի մասին ինչ է ասում սօցիալիզմի և օրթօքթս մարքսիզմի ժամանակակից տաղանդաւոր ուսուցիչը—Կարլ Կաուցկին:

VIII

Կարլ Կաուցկու կարծիքը.—Անգլիական արհեստակցական միութիւնների անցեալից ու ներկայից.—Խօսքով անկուսակցական, գործով կուսակցական.—Մեր պայմանները.—Ռուսական յեղափոխութիւնը.—Ազգերի բազմազանութիւնը.—Կուսակցականութիւնը վնասակար չէ:

Կարլ Կաուցկի, իր աշխատութեան *) մէջ քննելով անգլիական արհեստակցական միութիւնների—տրեդ-ունիօնների անկուսակցականութեան հարցը, դուրս է բերում այն եզրակացութիւնը, որ Անգլիայի առանձնատուկ տնտեսական պայմաններն են, որ զարկ են տւել այդ երևոյթին: Հէնց որ համաշխարհային մրցումը վերացրել է անգլիական արդիւնագործութեան առանձին նըպաստաւոր պայմանները, իսկոյն սկսել է արհեստակցական միութիւնների մէջ էլ ձգտում դէպի կուսակցականութիւնը:

—«Ներկայումս, ասում է նա, Անգլիայում էլ նըկատուում է, որ արհեստակցական միութիւնները ըսկսում են կասկածել անկուսակցականութեան օգտակարութեան վերաբերմամբ: Այդ երևոյթի աղկերև ազացոյցն է 1900 թ. փետրւարին Լօնդօնում գումարլած աշխատանքի ներկայացուցիչների համաժողովը—«Creat Labour Conference», որը պէտք է սկիզբն դնէր «տրեդ-ունիօնների» և սօցիալիստական կուսակցութիւնների միատեղ գործունէութեանը:

Այդ համաժողովին ներկայացուցիչներ կային «Independent Labour Party»—աշխատանքի անկախ կուսակցութիւնից—որ 13,000 անդամներ ունի. «Social democratic Federation»—Սօցիալ-Դեմօկրատների դաշնակցութիւնից—9000 անդամներով, 860 ֆաբրիաներից և 68 տրեդ-ունիօններից 554,000 անդամներով:

Վերջին թիւը շատ պարզ ցոյց է տալիս. թէ անգլիական արհեստակցական միութիւնների մէջ որքան

*) Ռուսերէն թարգմանութիւնը. Карль Каутский «Профессиональное движение и политическая партия пролетариата».

տարածւած է «անկուսակցականութիւնը» խախտելու ձգտումը:

Ինչպէս Անգլիայում, նոյնպէս և Ճրանսիայում այժմ ձգտում են ոչ թէ անկուսակցականութեան, այլ ընդհակառակը, այսինքն՝ աւելի սերտ կապելու արհեստակցական միութիւնները և սօցիալիստական կազմակերպութիւնները:

Վերջապէս այն երկրներում, որտեղ վաղուց արդէն արհեստակցական շարժումը և սօցիալ-դեմօկրատիան շողկապւած են սերտ կապերով, մենք ամենափոքրիկ ձգտում անգամ չենք նկատում այդ կապերը թուլացնելու վերաբերմամբ, ինչպէս օրինակ Բէլգիայում, Աւստրիայում և Դանիայում *)»...

— Ամենից առաջ պէտք է որոշել շարունակում է Կարլ Կաուցկի, **) թէ արդեօք առհասարակ հնարաւոր է ժամանակակից սլատմական պարագաներում իսկապէս անկուսակցական արհեստակցական միութիւններ ստեղծելը...

Այդ հարցը տալուց յետոյ տաղանդաւոր հեղինակը հակիրճ կերպով բացատրում է, որ գերմանական սօցիալ-դեմօկրատական արհեստակցական միութիւնները կուսակցական լինելով հանդերձ, միշտ համբերատար վերաբերմունք են ցոյց տւել դէպի միւս կուսակցութիւններէ անդամները, միշտ առանց դժուարութիւնների ընդունել են նրանց իրենց շրջանում:

— Ուրեմն այդ մասին վիճելու կարիք չկայ, եզրակացանում է նա: Անկուսակցականութեան հարցի էութեանը

*) К. Каутский «Професс. движение» стр. 7—8:

**) Jbid երես 13.

թիւնը նրանում չէ, թէ արդեօք արհեստակցական միութիւնները պէտք է անխտիր բաց լինեն բոլոր բանւորների առաջ առանց կրօնի ու կուսակցական դաւանանքի խտրութեան, այլ նրանում, թէ արդեօք այդ միութիւնները քաղաքականութեամբ պարապելու են, թէ ոչ»:

Դրանից յետոյ Կաուցկի քննութեան է ենթարկում անգլիական տրէդ ունիօնների ընկերութիւնների օրինակները, փաստերով ապացուցանում է, որ դրանք վաղուց արդէն զգացել են կուսակցակա՞ն քաղաքականութեան անհրաժեշտութիւնը և այդ ուղղութեամբ արդէն մի քանի քայլեր արել են, բնորոշում է տրէդ-ունիօնների անկուսակցականութեան հասցրած վնասները անգլիական բանւորներին և այդ բոլորից յետոյ եղբակացնում է:

— Անգլիական սօցիալիստները խորապէս զգում են այդ: Մօտ ժամանակներս Բերնշտայնը խօսելով անգլիացի բանւոր դասակարգի համար սպասելիք հեռանկարի մասին, ասում էր *). «պահպանողականները այս կամ այն շրջանում մի քանի աննշան գիշումներ կանեն բանւորներին: Բայց դա կը լինի չնչին փշրանքներ... և միութեանը դրա համար կարելի է յանդիմանել այդ կուսակցութեանը, քանի որ բանւորները սպասում ևս բարենորոգումների, փոխանկի կտուով ձեռք ընել աշխատելու...»

— Անգլիացի բանւորը, ասել է մի անգամ, մի բարկացած սօցիալիստ, քաղաքական մուրացկան է, այսինքն սովորել է քաղաքական ողորմութիւն ստանալու. իսկ մուրացկանը միշտ էլ պէտք է բաւականանայ նրանով, ինչ որ տալիս են **)»...

*) Jbid. եր. 39.

**) «Neue Zeit» XIII, 2, էր. 438.

Ահա այդպիսի մուրացիկ վիճակից դուրս գալու համար է, որ անգլիացի բանուորները վերջերս իրենց, արհեստակցական միութիւններին հետզհետէ կուսակցական գոյն են տալիս:

Դառնալով այն մարդկանց, որոնք արհեստակցական միութիւնների վերաբերմամբ «անկուսակցականութիւն» են քարոզում, կառուցկին ասում է *).

— «Դրանք տարբերում են «կուսակցականութիւն» քարոզող ընկերներից միայն նրանով, որ իրենց կուսակցութեան հասցէին երգում են Հայնէի խօսքերով.

Blamier mich nicht mein schönes Kind
Und grüss mich nicht unter den Linden,
Wenn wir nachher zu Hause sind,
Wird sich schon alles finden.

Ինձ մի՛ ամաշացնիր սիրուն մանկիկս,
Եւ ինձ մի՛ ողջունիր լորինների տակ.
Յետոյ, երբ տանը կը լինենք, ...
Արդէն ամեն ինչ կարգի կընկնի:

Բայց քանի որ «սիրուն մանկիկի» հետ յետոյ պատահելու համար աչքի առաջ ունեցած տները բաց պարլամենտներն են, միտինդներն ու ժողովատեղիները, ուրեմն պէտք է չափազանց մեծ չափով քաղաքական անմեղութիւն ունենալ լրջօրէն հաւատալու համար թէ նրանք ծանօթ չեն «սիրուն մանկիկի» հետ, այսինքն, թէ այդ «անկուսակցականութիւն» քարոզողները շերտ՝ կուսակցական չեն: Այդ դէպքում անկուսակցականութիւն պահանջելը նոյն է, թէ արհեստակցական միու-

*) «Проф. движ.» Կր. 21:

թիւններից քաղաքական կատարեալ անմեղութիւն պահանջել:

Չէ՞ որ այդ անկուսակցականութիւնը կայանում է նրանում, որ մենք խօսքով անկուսակցական ենք, իսկ զործով կուսակցական քաղաքագէտներ (ընդգծումը մերն է): Արհեստակցական միութեան մէջ կիշխեն նոյն կուսակցական համոզմունքները, ինչպէս և միութիւնից դուրս. միութեան մէջ բանուորական քաղաքականութիւն կանւանւի այն, ինչ որ օրինակ ընտրողական ժողովում «սոց.-դեմօկրատիական» անունն էր կրում և «բանուորների բարեկամ» կանւանեն այն թեկնածուին, որը կուսակցութեան մէջ յայտնի է իբրև փորձած կուսակցական ընկեր:

Եթէ անկուսակցական միութիւնները քաղաքականութեամբ պարապեն, այդ դէպքում նրա անդամները, յամենայն դէպս քաղաքականապէս հասունացածները, այսինքն ամենալաւերը, կը հետևեն կուսակցական քաղաքականութեան: Իսկ եթէ արհեստակցական միութիւններից բոլորովին դուրս մղւի քաղաքականութիւնը, այն ժամանակ դրանք կը դառնան փոխադարձ օգնութեան հասարակ դրամարկղներ...»:

Այդքան շեշտակի կերպով ցոյց տալով իր բացասական վերաբերմունքը դէպի «անկուսակցականութիւնը», կառուցկին շարունակում է հարցի գիտական վերլուծումը և դուրս բերում այն եզրակացութիւնը, որ արհեստակցական միութիւնները պէտք է ունենան որոշ ծրագիր— թէկուզ գուտ անտեսական հիմունքներով— իսկ դրա իրադրո՞ման համար դարձեալ անհրաժեշտ է որոշ դաւանանք, որոշ քաղաքականութիւն ու համոզմունք, որ արդէն գուցած ու ձևակերպւած են յայտնի կուսակցական դրօշակի տակ— «Բաւական չէ միայն ծրագիր ու-

նենալը, բացականչում է նա *), հարկաւոր է նրան իրականացնել, իսկ դրա համար հարկաւոր են կուսակցական քաղաքագէտներ... Մենք կարծում ենք, որ իրական փաստերը միանգամայն հակառակ են արհեստակցական միութիւնների անկուսակցականութեան և հաստատում են պրօլետարիատի քաղաքական անկախ կազմակերպութեան, ուրեմն և «կուսակցական քաղաքականութեան» անհրաժեշտութիւնը... Տնտեսական կեանքի զարգացումը օրէցօր աւելի ու աւելի ստիպում է, որ արհեստակցական միութիւնները դիմեն կուսակցական քաղաքականութեան օգնութեան, իսկ քաղաքական զարգացումը պահանջում է կուսակցութիւնից, որ նա արհեստակցական միութիւնների շրջանում օգնութիւն որոնէ... Հէնց այդ պատճառով անհրաժեշտ է, որ արհեստակցական միութիւնն ու կուսակցութիւնը իրար հետ սերտ կերպով շաղկապւած լինեն...»:

Ահա արդպէս է Կարլ Կառլցկու կարծիքը: Մենք դիտմամբ երկար կանգ առանք նրա վրայ, որպէսզի ընթերցողը փաստացի կերպով տեսնի, թէ սօցիալիզմի այդ ժամանակակից տաղանդաւոր ուսուցիչը — գերմանական սօցիալ-դեմօկրատիայի հռչակաւոր իդէօլօգն ու ղեկավարը ինչպէս է պատճառաբանում և շեշտում արհեստակցական միութիւնների կուսակցականութեան հարցը:

Այդ հեղինակաւոր պատճառաբանութեան վրայ աւելացրէք Վանդերվելդի, Շտրեբէլի և այլ նշանաւոր սօցիալիստների նոյնանման կարծիքները, աչքի առաջ ունեցէք վերևում յիշած պերճախօս փաստերը քաղաքակիրթ երկիրների արհեստակցական միութիւնների վերա-

*) Ibid եր. 24, 33, 47 և 50.

բերմամբ և այն ժամանակ լոյսի պէս պարզ կը լինի այն ճշմարտութիւնը, թէ ներկայ պայմաններում արհեստակցական միութիւններից անկուսակցականութիւն պահանջել կը նշանակէ ինքնախաբէութեամբ պարապել, թէ այդ միութիւնները միայն սօցիալիստական կուսակցական դրօշակի տակ կարող են զարգանալ, ուժեղանալ և աշխատաւոր դասակարգին մղել միշտ դէպի առաջ, դէպի իրենց դասակարգային շահերի պաշտպանութիւնն ու յաղթանակը:

— Այո, այդպէս է քաղաքակիրթ երկրներում, շատ անգամ բացականչում են հակառակ կարծիք ունեցող անհատներ ու կուսակցութիւնները մեղանում, այդպէս են քարոզում հեղինակաւոր սօցիալիստները, բայց և այնպէս այստեղ արհեստակցական միութիւնները պէտք լինեն անկուսակցական, որովհետեւ այստեղի պայմանները բոլորովին տարբեր են...»

Տարբեր պայմաններ: Եթէ խօսքը Ռուսաստանում բռնկւած յեղափոխութեան մասին է, ապա ուրեմն արհեստակցական միութիւնները աւելի ևս մեծ կարիք ունեն սօցիալիստական կուսակցութիւնների հովանաւորութեան և ղեկավարութեան, որովհետեւ նրանք իւրաքանչիւր քայլափոխում ենթակայ են բռնութեան ու հալածանքի, շարունակ ստիպւած են տնտեսականի հետ նաև քաղաքական պայքար մղել, իսկ այդպիսի պայմաններում միշտ էլ անհրաժեշտ է պաշտպանող և ուղղութիւն տւող կուսակցական ձեռքը, կուսակցական դրօշակն ու ծրագիրը:

Եթէ «տարբեր պայմանների» տակ հասկացւում են ուսանալատակ բազմաթիւ ու բազմազան ազգութիւններն իրենց տարբեր ձգտումներով, այդ էլ եր-

բէք չի կարող դրդիչ լինել արհեստակցական միութիւններին անկուսակցականութեան: Եթէ գոյութիւն ունեն տարբեր հոսանքներ և դրանց շուրջը կազմակերպւած են տարբեր կուսակցութիւններ պէս-պէս ծրագիրներով, ապա ուրեմն ինքնախաբէութիւն կը լինի կարծել, թէ այդ հոսանքների, այդ կուսակցութիւնների անդամներին միայն արհեստակցական կապով միացնելով և «անկուսակցական» քօղի տակ քաշելով կարելի կը լինի նրանց յետ պահել կուսակցական պայքարից, համոզմունքից ու քաղաքականութիւնից: Երբէք:

Որոշ համոզմունք ունեցող և որոշ կուսակցութեան պատկանող աշխատաւորը իւրաքանչիւր քայլափոխում պիտի արտայայտի իր համոզմունքները, պիտի պաշտպանէ ու ջատագովէ իր կուսակցութեան անունը կամ ինչպէս Կառուցիկին է ասում «նա պէտք է լինի խօսքով անկուսակցական, իսկ գործով կուսակցական»:

Իսկ այդպիսի երկդիմի քաղաքականութիւնը կարող է աւելի շատ թիւրիմացութիւններ առաջացնել, աւելի յաճախ դժգոհութիւններ ու պառակտումներ զարթեցնել յեղափոխական տարբեր կուսակցութիւնների պատկանող աշխատաւորների միջև և հէնց դրանով փաստել նրանց ցանկալի համակերպութեանը:

Կեղծ և անիրագործելի «անկուսակցականութեան» թափանցիկ քօղը չէ, որ կարող է դրա առաջն անել, այն բացայայտ ծրագիրը և դաւանանքը:

Արհեստակցական միութեան անդամները հէնց ըսկըբից պէտք է իմանան, թէ իրենց տնտեսական-քաղաքական պահանջները ի՞նչ ծրագրով, ի՞նչ ուղիով պիտի ընթանան, այսինքն սօցիալիստական ռը կուսակցու-

թեան ղեկավարութեամբ պէտք է առաջ մղեն ու պաշտպանեն:

Եթէ սխալ է այդ ուղին, եթէ աշխատաւոր դասակարգի շահերին անհամապատասխան է ընտրած կուսակցութիւնը, այն ժամանակ նրա անդամները ինքն ըստ ինքեան կը թողնեն նրան և կանցնեն այլ ճանապարհ, այլ դրօշակի տակ և այդպիսով վերջ ի վերջոյ կը համախմբւեն այն կուսակցութեան դրօշակի շուրջը, որը ամենակատարեալն է: Եւ այդ կը կատարւի բնական ճանապարհով, կեանքի, իրական փաստերի հօգօ հարւածներով և ոչ թէ «անկուսակցականութիւն» կոչւող ինքնախաբութեամբ և ամբողջային տրամաբանութիւնը շոյոդ օրօրներով:

Կողք-կողքի ապրող ազգութիւնների բազմազանութիւնը երբէք չը պէտք է երկիւղ ազդէ այդ ինդրում: Նոյն «բազմազանութիւնը» գոյութիւն ունի և արեւմտեան Ռուսաստանում, բայց և այնպէս հրէական «Բունդը» և «լեհական սօցիալ-դեմօկրատիան» իրենց արհեստակցական միութիւնները կազմակերպում են կուսակցական նշանաբանով և դժգոհ չեն բարերար հետեւանքից:

Ազգերի նոյնպիսի բազմազանութիւն և պայքար կայ նաև Աւստրիայում, բայց այդտեղ էլ ոչ միայն արհեստակցական միութիւնների մեծ մասը կուսակցական են, այլ նոյն իսկ սօցիալ-դեմօկրատական ամբողջ կուսակցութիւնը բաժանւած է ազգային առանձին-առանձին կազմակերպութիւնների և այդ իրողութիւնը ոչ թէ վրնասում է, այլ ընդհակառակը աւելի նպաստում է տարբեր ազգութիւնների պրօլետարիատի համերաշխութեան ու դասակարգային դիտակցութեան զարգացմանը:

Այդտեղ սօցիալ-դեմօկրատները ազգայնական կազ-

մակերպութիւնների սկզբունքը մտցրել էին նոյն իսկ արհեստակցական շարժման մէջ, այսինքն այդ միութիւնները կազմակերպում էին աշխատաւորների ազգութեան համեմատ, այդպիսով շատ անգամ միևնոյն գործարանի և միևնոյն սօցիալ-դեմօկրատիական դաւանանքի բանւորներին ըստ ազգութեան մի քանի միութիւնների բաժանելով:

Այդպիսի ստորաբաժանումը աննպատակայարմար համարւելով, 1905 թւականի վերջերին Վիէննայում կայացած աւստրիական արհեստակցական միութիւնների արտակարգ համագումարը ձայների մեծամասնութեամբ որոշեց վերացնել այդ ձևը և փոխարէնը հաստատել կենդրոնացման սկզբունքը *), այսինքն արհեստակցական միութիւնների մէջ անդամներ ընդունել առանց ազգի ու կրօնի խարութեան:

Կուսակցականութեան հարցի դէմ այս անգամ էլ համագումարում ոչ մի առարկութիւն չէ եղել: Աւստրիական արհեստակցական միութիւնները այդ համագումարից յետոյ էլ մնում են կուսակցական:

Մեզանում, ինչպէս յայտնի է, կուսակցականութեան կողմնակիցները երբէք չեն պահանջում, որ արհեստակցական միութիւնները զուտ ազգայնական կազմակերպութիւններ լինեն: Ո՛չ. այդտեղ ազգային խտրութեան հարց չկայ:

Ուրեմն պէտք է մի կողմ թողնել անհիմ երկիւղները, կեղծ ու պատիւր պատճառաբանութիւնները և օր առաջ կազմակերպել արհեստակցական միութիւններ իւրաքանչիւր միջավայրի պրօլետարիատի պահանջներին

*) Г. Плехановъ: «Дневникъ социаль-демократа» № 6.

համապատասխանող սօցիալիստական կուսակցութեան դրօշակի տակ:

Արհեստակցական միութիւնների կուսակցութիւնը երբէք չի կարող միջնացնել աշխատաւոր դասակարգի գիտակցութիւնը:

Ընդհակառակը: Աշխատանքի և կապիտալի անողոջ կռի սօցիալիզմի վարդապետութեան ճաճանչներով լուսաւորւած միշտ և ամեն տեղ կը հնչեցնէ իր ազդու շեշտերը, համոզելով, թէ որքան էլ քարբեր լինեն շահագործողների ճանապարհները, այնուամենայնիւ նրանք միշտ միասին պէտք է թափեն իրենց հարւածները ընդդէմ ընդհանուր թշնամու:

Առանձին գնալ, միասին հարւածել անա այդ է լինելու կուսակցական արհեստակցական միութիւնների նշանաբանը:

Եւ նա կիրադործւի, որովհետև այդպէս է կեանքի հրամայողական պահանջը:

IX

Ի՞նչպէս պէտք է սկսել կազմակերպել.—նախապատրաստական պրօպագանդ և ժողովներ.—զարձեալ ազգային և կուսակցական հարցերը.—տարբեր միութիւններ.—նոյն արհեստի տարբեր միութիւնների համերաշխութիւնը.—Գաշնակցական և «անկուսակցական» միութիւնների անցեալից օրինակներ:

Նախընթաց գլուխներից մենք արդէն տեսանք, թէ որքան անհրաժեշտ ու օգտակար են արհեստակցական միութիւնները աշխատաւոր դասակարգի համար, եթէ

միայն կազմակերպւած են ցանկալի ձևով և սօցիալիս-
տական որոշ կուսակցութեան հովանաւորութեան տակ

Այժմ մեզ մնում է առանձնապէս կովկասեան իրա-
կանութիւնն աչքի առաջ ունենալով պարզել, թէ ի՞նչ-
պէս պէտք է սկսել գործը, ի՞նչպէս պէտք է շարկապել
բազմաթիւ աշխատաւորներին միմեանց հետ:

— Լաւ սկիզբը գործի կէսն է, ասում է ժողովրդա-
կան առածը:

Եւ իսկապէս որքան լաւ, որքան նպատակայարմար
ձևով է սկսած միութիւնների կազմակերպել, այնքան
աջող առաջ կընթանայ նրանց զարգացումը:

Այդպիսի աջողութեան ամենագլխաւոր գրաւակա-
նը աշխատաւորների գիտակցութիւնն է: Հէնց այդ
պատճառով էլ պէտք է մտնել նրանց շարքերը, պարզել
— բաց անել սօցիալական մեծ չարիքի արմատը, կեղե-
քող դասակարգի ու նրան հովանաւորող բռնակալ կա-
ռավարութեան սանձարձակ շահագործումն ու ճնշումը
և այդ բոլորին վերջ տալու համար անհրաժեշտ միու-
թիւնը՝ համերաշխ ջանքերով ընդհանուր թշնամիների —
հարստահարիչների դէմ մաքառելու նպատակով:

Այդպէս պէտք է վարեն գիտակից բանւորները իրանց
յետամնաց ընկերներին էլ բարձրացնելու համար:

Այդպէս պէտք է վարեն և բոլոր այն մարդիկ, ո-
րոնք բարեկամ են աշխատաւոր դասակարգին և ցանկա-
նում են նրա բարօրութիւնը, նրա յաղթանակը յանուն
համամարդկային հաւասարութեան ու ազատութեան:

Այդպիսով հէնց որ մի որևէ գործարանում կամ
արհեստանոցում կազմւեց գաղափարակիցների նոյն իսկ
մի փոքրիկ խմբակ, նրանք իսկոյն ձեռնամուխ պէտք է
լինեն գործին՝ ընդհանուր ու մասնակի խմբական ժո-

ղովներ նշանակեն, հաւաքեն բոլոր ընկերներին, խոր-
հրդակցեն նրանց հետ, պարզեն արհեստակցական միու-
թեան անհրաժեշտութիւնը և առանց տատանւելու հիմք
դնեն նրա գոյութեանը:

Կարող է պատահել, որ միևնոյն արհեստի ոչ բոլոր
բանւորները համակարծիք կլինեն: Ոմանք յոռատեսու-
թեամբ կվերաբերւեն, ոմանք անտարբերութեամբ ու
սառնութեամբ, ոմանք էլ նոյն իսկ բացարձակ հակառակ
կլինեն, ղեկավարւելով կամ սեփական տգիտութեամբ
կամ չարամիտ մարդկանց տարածած շինծու լուրերով,
կասկածներով ու սպառնալիքներով:

Պարզ է, իհարկէ, որ շահագործող «խազէյիները»
— կապիտալիստները երբէք չեն ուզենայ, որ իրանց բան-
ւորները, արհեստաւորները միանան, որովհետև շատ լաւ
գիտեն, թէ այդ միութեան ոյժը իրանց դէմ է ուղ-
ղւելու:

Այն, զրանք հոգով ու սրտով հակառակ կլինեն աշ-
խատաւորների այդպիսի համերաշխ կազմակերպութեանը
և ամեն կերպ կաշխատեն պղտորել միամիտների մտքե-
րը, սուտ ու սխալ պատկեր տալ «արհեստակցական
միութիւնների» մասին և այդպիսով ջլատել նրանց ոյժը:

Բայց տգէտ ու մոլորւած ընկերների սառնութիւ-
նը, չարամիտների գաղտնի ու յայտնի ոտնձգութիւն-
ները — այդ բոլորն էլ երբէք չպէտք է վհատեցնէ
գիտակից աշխատաւորներին ու նրանց ղեկավարներին:

Նրանք պէտք է աշխատեն յաղթել խոչնդոտներին
և գեղեցիկ գործի հիմքը դնել:

Որքան էլ սակաւաթիւ լինեն նորահաստատ «միու-
թեան» անդամները, որքան էլ դժւարութիւնների հան-
դիպեն նրանք, բայց և այնպէս առանց յուսահատւելու

պէտք է շարունակեն իրանց սկսած գործը, որովհետև ազատութիւնն ու հաւասարութիւնն է այդ գործի նըշանաբանը և նրանն է վերջնական փառաւոր յաղթանակը:

Մոլորած ու յոռետես ընկերները կամաց-կամաց կը հասկանան իրանց շահերը և կգան, կհամախմբւեն միութեան դրօշակի տակ:

Չպէտք է մոռանալ, որ հեռաւոր Բելգիայի Գենտ քաղաքում 10-15 հացթուխներ էին, որ հիմք դրին «Հացթուխների միութեան», շաբաթական միայն 10 կոպ. անդամավճար տալով, բայց այդ փոքրիկ միութիւնը տարեց տարի աճեց, զարգացաւ և այժմ արդէն դարձել է մի հսկայական կազմակերպութիւն, որ ունի հազարաւոր անդամներ, մի քանի ճիւղեր և չափազանց լայն ու բազմակողմանի գործունէութիւն:

Այդպէս ուրեմն միութիւն կազմակերպելիս ամեն կերպ պէտք է աշխատել գրաւելու, համոզելու և միացնելու միևնոյն արհեստի բոլոր աշխատաւորներին առանց կրօնի ու ազգի խտրութեան:

Այո, բոլոր աշխատաւորները ինչ ազգի ու դաւանութեան էլ պատկանեն, այնուամենայնիւ միատեսակ ցաւերով ու ձրգտումներով շարկապած եղբայրներ են, ուստի և համերաշխօրէն, միացած ոյժերով պէտք է պաշտպանեն իրանց դասակարգային շահերը:

Որքան մեզ յայտնի է, Հ. Յ. Դաշնակցութիւնն էլ այդ սկզբունքով զեկավարւելով, իր միութիւնների մէջ ամենայն քաջակերութեամբ ընդունում է և ուրիշ ազգութեան աշխատաւորների, եթէ նրանք ծանօթանալով կուսակցութեան ծրագրի հետ, տալիս են իրանց հաւանութիւնն ու համաձայնութիւնը: Այսպէս օրինակ Թիֆլիսի դաշնակցական արհեստակցական միութիւններից մի

քանիսում հայ անդամների շարքերում կան նաև սակաւաթիւ թուրքեր (օր. Ադիլխանովի գործարանում), ռուսներ, վրացիներ ու հրէաներ:

Պարզ է, ի հարկէ, որ ժամանակի ընթացքում այդ օտարազգիների թիւը կարող է աւելի ևս մեծանալ, որովհետև նրանք գործով կտեսնեն ու կհամոզւեն, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը «նեղ ազգային» կուսակցութիւն չէ-«Հայոց թագաւորութիւն» ստեղծել ու տեսչերով ինչպէս ասում են զրպարտիչ լեզուներն ու գրչակները, այլ սօցիալիստական մի կազմակերպութիւն, որը դաւանում է համամարդկային գաղափարներ, ցանկանում է բոլոր աշխատաւորների բարօրութիւնը, բոլոր ազգերի ազատութիւնն ու հաւասարութիւնը, ուստի և ամեն անգամ հայի կեանքի ու իրաւունքի պաշտպան է հանդիսացել, երբ նրա դէմ ուղղւած է տեսել բռնակալական յատուկ հարւածներ ու արշաւանքներ...

Այսպէս ուրեմն հայ աշխատաւորները Դաշնակցութեան դրօշակի տակ կազմակերպելով իրանց միութիւնը, չպէտք է խորշեն, հեռանան իրանց օտարազգի ընկերներից, այլ ընդհակառակը նրանց պէտք է բացատրեն-պարզեն Դաշնակցութեան ծրագիրն ու ձգտումները և զբանով հնարաւորութիւն տան աւելի մօտենալու, իսկ ցանկացած դէպքում նոյն իսկ մասնակցելու դաշնակցական միութեան մէջ:

Ազգային հարցից յետոյ երկրորդ-գործնական նշանակութիւն ունեցողը կուսակցական հարցն է:

Ի՞նչ անել, ի՞նչպէս կազմակերպել, երբ միևնոյն արհեստի կամ գործարանի աշխատաւորները տարբեր համոզմունքների, քաղաքական տարբեր դաւանանքների աէր

են, օրինակ մի մասը դաշնակցականներ են, իսկ միւս մասը սօցիալ-դեմօկրատներ:

Այդ դէպքում զրանց կարելի է կազմակերպել առանձին-առանձին, բայց միևնոյն ժամանակ աշխատելով, որ ընդհանուր խնդիրներում, (գործադուլ, տնտեսական պահանջներ և այլն)-տարբեր կուսակցութիւնների ղեկավարութեամբ գործող այդ միութիւնները որոշ համաձայնութեան գան և համերաշխօրէն գործեն:

Որքան էլ որ ցանկալի չը լինի նոյն արհեստի աշխատաւորների դատ-դատ միութիւններ կազմելը, բայց և այնպէս միայն պլատօնական ցանկութեամբ կամ «անկուսակցութիւն» կոչւող ինքնախաբէութեամբ երբէք չի կարելի դրա առաջն առնել:

Միութեան անդամների տարբեր համոզմունքներն ու կուսակցական դաւանանքները իւրաքանչիւր հարցում, իւրաքանչիւր քայլափոխում անխուսափելիօրէն կբաղխեն միմեանց: Անկուսակցական քօղը շատ անգամ կարող է նոյն իսկ աւելի արագացնել այդ բաղխումը և դժւարացնել համերաշխութիւնն ու համաձայնութիւնը: Այն ինչ եթէ հէնց սկզբից գտած ու ծրագրաորոշած լինեն տարբեր հոսանքները, այն ժամանակ աւելի հեշտ ու դիւրին կլինի նրանց բանակցելն ու համաձայնութեան գալը ձեռնահաս մարմինների միջոցով:

Հէնց մեր կովկասեան իրականութիւնը պերճախօս փաստերով այդ է հաստատում: Ինչպէս յայտնի է մեզանում 1906 թուականից սկսած արհեստակցական շարժման մէջ երկու հակադիր հոսանք է նկատուում: Մէկը կուսակցական նշանաբանով՝ Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարութեամբ, իսկ միւսը անկուսակցական-սօցիալ-դեմօկրատիական:

Եւ այդպիսով թէ Թիֆլիսում և թէ գաւառական քաղաքներում կազմակերպւել են մի շարք արհեստակցական միութիւններ: Միայն Թիֆլիսում դաշնակցական արհեստակցական միութիւնների թիւը արդէն 20-ից աւելի է. բազմաթիւ են նաև անկուսակցական-սօց. դեմօկրատիական միութիւնները: Այսպէս օրինակ կայ դերձակների երկու արհեստակցական միութիւն՝ մէկը դաշնակցական, միւսը անկուսակցական-սօց. դեմօկրատիական. նոյնը կօշկակարների, հացթուխների, գործակատարների, տրամվայի, երկաթուղիական և գործարանական ու այլ արհեստանոցային միւս բանւորների վերաբերմամբ:

Այն, տարբեր կուսակցութիւնների հովանաւորութեան ու ղեկավարութեան տակ են եղել այդ միութիւնները, բայց և այնպէս ընդհանուր-տնտեսական հարցերում միշտ էլ հնարաւոր է եղել փոխադարձ համաձայնութիւն կայացնել և համերաշխ ոյժերով դուրս գալ ընդդէմ կապիտալիստների՝ շահագործող տէրերի:

Այս կամ այն արհեստակցական միութիւնը մի որևէ պահանջ մշակելուց յետոյ միշտ էլ յայտնել է արհեստակից միւս միութեանը և կայացրել է համաձայնութիւն, ապա երկու միութիւնների ներկայացուցիչներից կազմել է խառն «գործադիր բիւրօ», որը և իբրև այդ արհեստի ամբողջ բանւորութեան ներկայացուցիչ վարել է բանակցութիւններ, ղեկավարել է գործադուլները:

Ահա այդպէս են առաջ տարւել այն մի շարք արհեստական գործադուլները Թիֆլիսում, որոնք գրեթէ բոլորն էլ աջողութեամբ են պսակւել:

Դաշնակցական և սօց. դեմօկրատիական այդպիսի խառը «բիւրօն» էր ղեկավարում նաև Թիֆլիսի ծխախոտագործարանների բանւորների հսկայական գործա-

դուրը, որ երկու ամսից աւելի տեսց և դարձեալ յաղթանակով վերջացաւ:

Ուրեմն արհեստակցական միութիւնները կուսակցականութիւնը երբէք այնպիսի ջլատում ու վնաս չի պատճառում, ինչպէս աշխատում են հաւասարացնել սօց.-դեմօկրատները:

Գրեթէ միշտ էլ հնարաւոր է համաձայնութիւն կայացնելը, իսկ երբ հարցը տարբեր համոզմունքների, կուսակցական տարբեր դաւանանքների պատճառով միատեսակ հաւանութիւն չի գտնում երկուսի կողմից էլ, այն ժամանակ իւրաքանչիւրն ազատ է իր ուղած ձևով ու ծրագրով գործելու, քանի որ ունի իր ուրոյն կազմակերպութիւնը, դեկավարող մարմիններն ու կասսան: Այդպիսի ազատութիւնն էլ բացի օգուտից վնաս չէ կարող բերել համերաշխութեան գործին, որովհետև աշխատաւորների մի մասի համոզմունքների ու ձգտումները ճնշումով չէ, որ միւս մասը կարող է համերաշխութեանը նպաստել, այլ նրանց ազատ արտայայտութեան հրահարաւորութիւն տալով:

Ահա այդպէս ուրեմն դաշնակցական բանւորները, որտեղ որ հնարաւոր է, պէտք է աշխատեն իրանց արհեստակից բոլոր ընկերներին համախմբել Հ. Յ. Դաշնակցութեան դրօշակի տակ և նրա ծրագրով «արհեստակցականը միութիւն» կազմել: Իսկ այնտեղերում, որտեղ կան ուրիշ կուսակցութեան հետևողներ, դաշնակցականները նոյնպէս առանց զանգաղելու և կասկածելու պէտք է համախմբեն ու կազմեն իրանց միութիւնը, թողնելով որ միւս ընկերներն էլ իրանց ցանկացած ծրագրով կազմակերպեն: Բայց այդ միևնոյն ժամանակ

միշտ պէտք է աշխատել համերաշխութեան սերտ կապ հաստատելու:

X

Անդամավճարների եւ ամսավճարների հարցը.—Միութեան վարիչ մարմինները.—Շահակից եւ զանազան քաղաքների միութիւնների կապը.—Եզրափակում:



Արհեստակցական միութեան հիմնադիր ընդհանուր ժողովը, իր ծրագրերը մշակելով, ամենից առաջ պիտի որոշէ անդամավճարները և պարբերական ամսավճարները:

Ամենքի համար հասկանալի է, որ որքան լայն լինեն արհեստակցական միութեան նիւթական միջոցները, նոյնքան համարձակ ու աջող կերպով կարող է նա պաշտպանել իր անդամներին, առաջ տանել նրանց պաշտպանել իր անդամներին, առաջ տանել նրանց պահանջներն ու գործադուլները: Այդ իսկ պատճառով աճանջներն ու գործադուլները: Այդ իսկ պատճառով աճանջներն ու գործադուլները: Այդ իսկ պատճառով աճանջներն ու գործադուլները: Այդ իսկ պատճառով աճանջներն ու գործադուլները: Այդ իսկ պատճառով աճանջներն ու գործադուլները:

Միանուգ անդամավճարի սովորական չափ կարելի է համարել 50 կոպ., իսկ եթէ ընդհանուր ժողովի կարծիքով այդքանը քիչ համարւի, այն ժամանակ կարելի է և աւելի նշանակել:

Ամսավճարը որոշելիս պէտք է աչքի առաջ ունենալ, որ միութեան անդամը իր այդ վճարով տալիս է

նպաստ թէ արհեստակցական միութեան տնտեսական կարիքներն և թէ կուսակցութեան քաղաքական նպատակների համար: Եթէ նա մինչ այդ անդամ է եղել գաշնակցական այս կամ այն խմբի և վճարել է որոշ գումար, իբրև ամսական տուրք, միութեան անդամ դառնալուց յետոյ նա վճարում է միայն վերոյիշեալ ամսավճարը և ուրիշ ոչինչ:

Այդ ձևի ամսավճարների չափը կարող է լինել 1—2⁰/₀: Այսինքն 10 ռ. ամսական ստացողը վճարում է 10 կոպ. կամ 20 կոպ., 20 ռ. ստացողը—20 կամ 40 կոպ., 30 ռ. ստացողը 30 կամ 60 կոպ. և այլն: Այդ գումարների չափը պէտք է որոշէ միութեան հիմնադիր ընդհանուր ժողովը, միևնոյն ժամանակ պարզելով, թէ արհեստակցական միութեան եկամտների ո՞ր մասը պէտք է տրւի կուսակցութեան գուտ քաղաքական նպատակների համար—(օրինակ $\frac{1}{2}$ -ը, $\frac{1}{3}$ -ը կամ $\frac{1}{4}$)—և որ մասը թողնւի իրան-միութեանը իր տնտեսական կարիքների համար. այդ գումարն էլ պէտք է մասնահատել և նախապէս որոշել, թէ ո՞ր մասը կարող է գործադուներին համար ծախուել, ո՞ր մասը ճանապարհածախսի կամ այլ յատուկ նպատակների և ո՞ր մասը ընթացիկ պէտքերի համար:

Պարզ է, իհարկէ, որ գումարի ամենախոշոր մասը պէտք է յատկացնել գործադուներին, որովհետև «Արհեստակցական միութեան» ձեռքում գործադուլը ամենագորեղ գէնքն է, որով նա կարող է ընկձել իր հակառակորդ կապիտալիստներին և բարւոքել իր անդամների վիճակը, կատարել տալով նրանց պահանջները:

Իսկ որքան շատ լինեն նիւթական միջոցները նոյնքան աջող կանցնեն գործադուները:

Ահա այդ հարցերը լուծելուց յետոյ ընդհանուր ժողովը պէտք է իր միջից ընտրէ վարչական մարմիններ (ա). վարչութիւն (5, 7 կամ 9 անդամից բաղկացած), բ) ներկայացուցիչների խորհուրդ (իւրաքանչիւր 10, 20, 30 կամ 50 բանուրին մի ներկայացուցիչ՝ գործարանի կամ արհեստանոցների յարմարութեան համեմատ): Այդ մարմինների պարտքը կըլինի ի կատար ածել կայացրած որոշումները՝ հաւաքել անդամավճարները, նոր անդամներ գրաւել և առհասարակ ղեկավարել ընթացիկ բոլոր գործերը:

Այդ մարմինները կարելի է ընտրել ժամանակաւորապէս, մինչև որ միութեան գործերը կանոնաւորւեն ու իսկական անդամների թիւը որոշւի կամ հէնց սկզբից որոշ ժամանակով՝ 6 ամսով կամ 1 տարով:

Այդ բոլորից յետոյ արհեստակցական միութիւնը իր անդամների շահերն ու պահանջները ղեկավարելուց զատ պէտք է աշխատի կապ հաստատել ոչ միայն նոյն արհեստի միւս միութիւններին հետ, այլ և բոլոր այն միութիւնների հետ, որոնք փոքր կամ մեծ չափով կապ ունեն իրար հետ. այսպէս օրինակ կոշիկակարների միութիւնը պէտք է կապ հաստատէ չուստ կարողների և կաշեգործների—գաբաղների հետ. հիւաները—բարտաշների, որմնագիրների, սւաղչիների հետ և այլն:

Այդպիսի կապը անհրաժեշտ է, որովհետև կարող են պատահել զէպքեր, երբ մի քանի միութիւններ միասին միայն կարող են պաշտպանել իրանց որոշ տնտեսական պահանջները:

Դժւարը արհեստակցական միութիւններ կազմակերպելն է: Դրանից յետոյ շատ հեշտ է նրանց մէջ կապ ու փոխադարձ աջակցութիւն հաստատելը. զրա համար

բաւական է արհեստակցական միութիւնների ներկայացուցիչներին մի բիւրօ կազմել:

Նոյն նպատակով ցանկալի է և օգտակար կապ հաստատել հարևան քաղաքներին արհեստակցական միութիւններին հետ:

Իսկ վերջում նաև պետութեան սահմաններում գտնւող բոլոր միւս արհեստակցական միութիւններին հետ կապ հաստատել, ստեղծելով արհեստակցական ֆեդերացիա, որ այնքան խոշոր դեր կարող է խաղալ քաղաքական և տնտեսական բոլոր հարցերում:

Այդ բոլոր դէպքերում անփոխարինելի ծառայութիւն կարող է մատուցանել կուսակցութիւնը, իբրև որոշ կապեր, հեղինակութիւն ու ազդեցութիւն ունեցող կազմակերպութիւն:

* * *

Ահա այն ցանկալի ուրւագիծը, որ մեր կարծիքով պէտք է ղեկավար ունենալ արհեստակցական միութիւններ կազմակերպելիս.

Թող ուրեմն առաջ անցնեն ձեռնհաս գործիչները, գիտակից աշխատաւորները և ամենքի աւանջին միշտ բարձր հնչեցնեն դասակարգային գիտակցութեան փրկարար գաղափարները, ժամանակակից շահագործման դէմ մաքառելու անհրաժեշտ խորհուրդները:

Թող նրանք աշխատանքի երգչուհու՝ Ադա Նեգրիլի խօսքերով ասեն իրանց ճնշած ու թշուառ բոլոր ընկերներին.

Ձեզ, սիլ հալածւած բաղդի գաւակներ,

Որ աշխատում էք

Պուր, աղմկալի կամարներին տակ գործարաններին,

Որ հառաչում էք մութ խորշերում արհեստանոցներին—

Ձեզ, սիլ թշուառներ, որջոյն ենք բերում

Եւ սուրբ վաստակը ձեր փառաբանում:

Իսկ այդ փառաբանութեան իբրև յուշարձաններ թող հիմնեն ու բարձրացնեն արհեստակցական միութիւններ, որ այնքան կարևոր, այնքան փրկարար են մանաւանդ մեր արիւնոտ երկնքի տակ, ուր անծայր բռնակալութիւնն է իշխում և անսահման հարստահարութիւնը սանձարձակ գործում:

Յ Ա Ի Ե Լ Ի Ա Ծ

Ինչպէս արդէն յիշեցինք, Կովկասում գործող սօցիալիստական կուսակցութիւններից Հ. Յ. Դաշնակցութիւնը կողմնակից է արհեստակցական միութիւնների կուսակցական կազմակերպութեան: Նա արդէն ունի այդ ուղղութեամբ մշակած «կանոնադրութիւն», որի համեմատ կազմակերպւել են մի քանի տասնեակ արհեստակցական միութիւններ՝ թէ թրփլիսում և թէ գաւառներում:

Աւելորդ չենք համարում առաջ բերել այդ ամբողջ կանոնադրութիւնը մի քանի բարեփոխութիւններով:



Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Կանոնադրութեան ձեռնարկ

I. Միութեան նպատակը

§ 1. Միութեան նպատակն է պաշտպանել և ընդարձակել իր անդամների սօցիալ-տնտեսական, դասակարգային շահերը, նաև նպաստել նրանց կրթական և քաղաքական առաջադիմութեանը:

§ 2. Այս նպատակին հասնելու համար միութիւնը աշխատում է՝

- ա) Բարձրացնել աշխատավարձը, նշանակելով նրա ամենապակաս չափը:
- բ) Հաստատել 8-ժամեայ բանւորական օր:
- գ) Հաստատել իւրաքանչիւր շաբաթ անընդհատ հանգիստ ոչ պակաս, քան 42 ժամ:
- դ) Կարգաւորել աշխատավարձը և աշխատանքի պայմանները կանանց ու երեխաների համար:
- ե) Արգելել կտորով կամ պայմանաժամից դուրս աշխատանքը, իբրև մի վրասակար միջոց աշխատաւոր դասակարգի համար:
- զ) Վերացնել միջնորդութիւնը և կապալառութիւնը:

- է) Անգործ անդամների համար աշխատանք որոնել:
- ը) Ամեն կերպ բարելաւել աշխատանք ունեցող իր անդամների սնտեսական-առողջապահական դրութիւնը:
- թ) Իրաւաբանական օգնութիւն հասցնել իր անդամներին:

ժ) Նպաստներ տալ աշխատագուրկ անդամներին:

ժա) Անհրաժեշտ դէպքում հրատարակել ու ղեկավարել գործադուլ, որի ժամանակ օժանդակել իր անդամներին՝ սնտեսական կռիւը աջող կերպով առաջ մղելու համար:

ժբ) Արծարծել և ամրացնել համերաշխութիւն բոլոր բանւորների հետ ընդհանրապէս և իր արհեստի բանւորների հետ մասնաւորապէս:

ժգ) Իր անգրագէտ անդամներին համար հիմնել յատուկ դասընթացներ:

ժդ) Բաց անել գրադարաններ-ընթերցարաններ և կազմակերպել ձրի դասախօսութիւններ, բանակցութեան մէջ մտնելով նոյնանպատակ կրթական ընկերութիւնների հետ:

ժե) Հիմնել ժողովարան, որտեղ հաւաքւո՛ւ ռւ ժամանակ անցկացնել կարողանան աշխատաւորները:

ժզ) Միջնորդ դատարանի միջոցով քննել և պարզել այն թիւրիմացութիւնները, որոնք ծագում են միութեան անդամների մէջ կամ միութեան անդամների և կողմնակի անձերի մէջ:

ժէ) Հրատարակել տալ այնպիսի օրէնքներ, որոնք ապահովում են միութեան և առհասարակ աշխատաւոր դասակարգի շահերը:

ժը) Չեռք բերել անձի ու բնակարանի կատարեալ

անձեռնմխելիութիւն և միութիւնների, գործադուլների, ժողովների, խօսքի ու մամուլի լիովին ազատութիւն:

II. Միութեան կազմը

§ 3. Միութիւնը կարող է ունենալ անսահմանափակ թւով անդամներ՝ առանց սեռի կրօնի ու ազգութեան խտրութեան, որոնք ընդունում են Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիրը-(օտարազգի անդամների համար պարտադիր կարող է լինել միայն Հ. Յ. Դ. «Կովկասեան գործունէութեան նախագիծը»)-և պատկանում են այս ինչ արհեստին (դնել արհեստի անունը):

§ 4. Միութեան անդամները լինում են ա) իսկական և բ) նպաստող:

§ 5. Իսկական անդամ լինել կարող է ամեն մի դաշնակցական, որ պատկանում է այս ինչ արհեստին և ապրում է այս ինչ քաղաքում:

Ծանօթ. 17 տարին չը լրացած անդամները իրաւունք չունեն որ և է պաշտօն ընդունել միութեան մէջ: Միութեան իսկական անդամ լինել չեն կարող նաև նոյն արհեստի մէջ վարչական (ադմինիստրատիւ) պաշտօն վարող անձեր (կառավարիչ և այլն):

§ 6. Նպաստող անդամ լինել կարող է ամեն մի անհատ, որ ա) միութեանը ցոյց է տալիս օժանդակութիւն իր անձնական ջանքերով (օր. բժիշկներ, իրաւագէտներ, գրագէտներ և այլն) և կամ որ և է կերպով նպաստում են միութեան նպատակի իրագործմանը և բ) որ համակրելով միութեան նպատակը՝ վճարում է սուսական որոշ նպաստ կամ միանւագ գումար:

Ծանօթ. Նպաստող անդամները չեն կարող օգտ-

ւել իսկական անդամների իրաւունքներով, ընդհանուր ժողովներին նրանք կարող են ներկայ լինել խորհրդակցական ձայնով:

§ 7. Վերոյիշեալ երկու կարգի անդամներն էլ ընտրուում և արձակուում են վարչութեան վճռով ընդհանուր ժողովի հաստատութեամբ

III. Միութեան իսկական անդամների իւաւունքները եւ պարտաւորութիւնները

§ 8. Միութեան իսկական անդամները անդամ դառնալիս տալիս են միանւագ առնւազը 50 կոպ. (Սյդ գումարը կարող է լինել աւել կամ պակաս՝ ընդհանուր ժողովի որոշմամբ) վճար, ապա իւրաքանչիւր ամիս ամեն մէկը իր ստացած ռոճիկի կամ աշխատավարձի 2 0/0- (կամ 1 0/0)-այսինքն իւրաքանչիւր ուրբուց 2 կոպ: Սյդ վճարների չափը պէտք է որոշէ ընդհանուր ժողովը:

§ 9. Այն իսկական անդամը, որը չի վճարէ 3 ամսւայ ընթացքում իր ամսավճարները՝ կը համարւի միութիւնից արձակւած. վերջինս իրաւունք ունի նորից միութեան անդամ գրւելու՝ համաձայն ընդհանուր հիմունքների, բայց նախապէս վճարելով իր պարտքը:

§ 10. Ամեն ոք, որ կը թողնի այն արհեստը, որի անդամ է եղել նա և կը զբաղւէ ուրիշ գործով՝ այդպիսին կը համարւի կամովին հեռացած միութիւնից:

§ 11. Այն անձերը, որոնք իրենց այս կամ այն գործով կը փաստեն միութեանը նիւթապէս կամ բարոյապէս, այդպիսիները կը հեռացւեն միութիւնից՝ ընդհանուր ժողովի վճռով, բայց նախօրօք միջնորդ դատարանի միջոցով հարցը քննելուց յետոյ:

§ 12. Թէ կամովին հեռացած և թէ արձակւած

անդամները իրաւունք չունեն յետ պահանջելու իրենց աւած վճարները:

§ 13. Միութեան ամեն մի անդամ ընդհանուր ժողովում ունի մէկ ձայնի իրաւունք (անձամբ ներկայ լինելու պայմանով):

§ 14. Միութեան ամեն մի անդամ օգուում է § 2-ի տակ յիշւած բոլոր իրաւունքներով:

Ծանօթ. Գրամական նպաստ (գործադուլի, հիւանդութեան, աշխատազրկութեան և նման դէպքերում) արւում է ամեն մի իսկական անդամի՝ նայած նրա կարիքին և միութեան առձեռն միջոցներին: Բացառիկ դէպքում իսկական անդամը կարող է փոխառութիւն անել միութեան գանձարանից, վարչութեան համաձայնութեամբ:

§ 15. Միութեան իսկական անդամները օգուել կարող են դրամական նպաստներով միմիայն այն դէպքում, երբ նրանք միութեան անդամ են զրւած առնւազն 6 ամիս (կամ 3 ամիս) առաջ:

IV. Միութեան միջոցները

§ 16. Միութեան միջոցներն են՝ ա) միանւագ արւած անդամակցական վճարներ, բ) ամսական անդամավճարներ, գ) միութեան դրամագլուխների տօկոսներից, ձեռնարկած դասախօսութիւններից, երեկոյթներից և այլ կերպ գոյացած գումարներ և դ) զանազան տեսակի յատուկ նւիրաբերութիւններ յօգուտ միութեան:

§ 17. Միութեան գումարները բաժանւում են երեք կարգի՝ ա) գործադուլային, բ) ընթացիկ և գ) կուսակցութեան ընդհանուր նպատակների համար:

ծանօթ. Եթէ գործադուլ արած բանւորներն ստանան գործադուլի ժամանակի վարձը, այդ դէպքում նրանք պէտք է վերադարձնեն միութեան գանձարանից վերջրած նպաստը:

§ 18. Ընդհանուր ժողովի վճռով կարող են կազմել նաև ուրիշ տեսակի յատուկ գրամագլուխներ (աշխատողուրիներին, հիւանդներին նպաստող և թաղման ծախք հոգացող կասսաներ և այլն)...

§ 19. Գործադուլային գրամագլուխը ծախսուում է ընդհանուր ժողովի որոշմամբ և հոգասարուլթեամբ՝ գործադուլ արած ընկերներին նպաստներ տալու և որոշ գործադուլային ծախքեր հոգալու համար: Իսկ ընթացիկ գրամագլուխը ծախսուում է միութեան ընդհանուր ծախքերի համար (միութեան ծառայողների, գասախօսների ուձիկ, իրենց համոզմունքների համար վնասւած անդամներին նպաստներ, պրօֆեսսիօնալ բանւորական թերթերին նպաստ և այլն):

§ 20. Եթէ միութեան միջոցները թոյլ տան, նա կարող է օգնութիւն հասնել նաև միւս արհեստներու մշխատող և կարիք զգացող ընկերներին կամ Միութեան նոյնանպասակ կազմակերպութիւններին:

§ 21. Միութեան պատկանող ազատ գրամագլուխները պահւում են ընթացիկ հաշուով (на текущій счет) որ և է բանկային հաստատութեան մէջ ընդհ. ժողովի վճռով:

Գանձապահը իրաւունք չունի կասսայում պահելու աւելի քան 25 ըուբլի. ֆնացածը պահւում է բանկում:

V. Միութեան գործերի վարելը

§ 22 Միութեան գործերը վարում են ա) ընդհա-

նուր ժողովը, բ) ընտրւած ներկայացուցիչների խորհուրդը, գ) ընտրւած վարչութիւնը:

Ընդհանուր ժողով

§ 22 Ընդհանուր ժողովները հրաւիրւում են վարչութեան կողմից և լինում են՝

ա) Հերթական, որ գումարւում են երեք ամիսը մի անգամ՝ լսելու և քննելու անցած ժամանակի հաշիւները և և խորհրդի ղեկուցումները.

բ) Արտակարգ ընդհանուր ժողովները, որ հրաւիրւում են կարիք եղած դէպքում, կամ վերաստուգիչ յանձնաժողովի կողմից (իր սեփական պատասխանատուութեամբ, երբ միութեան հաշիւները ուղիղ չեն տարւել), կամ առնւազն 10 անդամների ցանկութեամբ)

ծանօթ. Արտակարգ ընդհանուր ժողովի համար եղած պահանջը վարչութիւնը պարտաւոր է իրակա-նացնել ոչ ուշ քան երկու շաբաթւայ ընթացքում:

§ 23. Ընդհանուր ժողովն է վճռում միութեան վերաբերեալ կարևոր հարցերը: Օր. կանոնադրութեան փոփոխումը, գործադուլ յայտարարելը, անդամներ արձակելը, ուրիշ միութիւնների հետ համաձայնութեան գալը և այլն...

§ 24. Իւրաքանչիւր ընդհ. ժողովի տեղի և ժամանակի մասին, նաև ընդհ. ժողովի քննութեան ենթարկուող հարցերի մասին, միութեան անդամներին տեղեկացնում է վարչութիւնը իր ժամանակին, ժողովից 6 օր առաջ:

§ 25. ա. Ընդհ. ժողովը բաց է անում վարչութեան նախագահը. ապա ժողովն իր համար նախագահ է ընտրում իր այն անդամների միջից, որոնք պաշտօնատար մարդիկ չեն միութեան մէջ:

ժողովի արձանագրութիւնները կազմելու համար ընտրուում են մէկ կամ երկու քարտուղար ներկայ եղող անդամներէց:

§ 25 բ. Ընդհանուր ժողովը օրինական է համարուում, երբ ներկայ են քաղաքում ապրող անդամներից առնուազն $\frac{1}{3}$ -ը: Իսկ այն ընդհանուր ժողովները, որոնք պիտի վճռեն նաև մի օր և է անդամի ընկերութիւնից դուրս անելու, անշարժ կայքեր գնելու, զբաւ գնելու կամ ծախելու հարցեր, կանոնադրութեան փոփոխման կամ ընկերութեան փակման և նրա գործերի լիկվիդացիայի, գործադուլի հարցեր՝ այդպիսի դէպքերում անհրաժեշտ է քաղաքում ապրող անդամների $\frac{1}{2}$ -ից աւելիի ներկայութիւնը:

§ 26. Ընդհանուր ժողովներում սովորական հարցերը վճռուում են ձայների առաւելութեամբ: Ձայների հաւասար եղած դէպքում նախագահի ձայնը վճռող նշանակութիւն է ստանում: Իսկ պաշտօնատար անձերի ընտրութիւնը և նրանց բռնիկ նշանակելու հարցը վճռուում է անպատճառ գաղանի ձայնատուութեամբ:

§ 27. Առաջին անգամ ընդհանուր ժողովը չը կայացած դէպքում ոչ վաղ, քան դրանից մէկ շաբաթ յետոյ հրաւիրուում է ընդհանուր ժողով երկրորդ անգամ, որը և համարուում է օրինական, որքան անգամ էլ ներկայ լինեն ժողովին: Իրա մասին էլ նախօրօք յայտարարուում է:

Վարչութիւն

§ 28. Միութեան վարչութիւնը (գործադիր բիւրօ) բաղկացած է հինգ հոգուց, կարիք եղած դէպքում այդ թիւը կարող է լինել և 7, 9—ընդհանուր ժողովի որոշ-

մամբ, դրանք ընտրուում են ընդհանուր ժողովից: Եթէ վարչութեան անգամ կընտրւի խորհրդի ներկայացուցիչ՝ այդպիսին կը թողնի իր ներկայացուցչութիւնը:

§ 29. Վարչութեան գործն է ի կատար ածել խորհրդի որոշումները, նա կազմում ու պահում է միութեան անդամների ցուցակը, նրանց ընտանեկան դրութեան մասին մանրամասն տեղեկութիւններ:

Հաւաքում է ամսավճարները, պահում է հաշիւը, ծախսում է գումարները ընդհանուր ժողովի որոշման համաձայն և առհասարակ ղեկավարում է միութեան վերաբերեալ բոլոր ընթացիկ գործերը:

Վարչութիւնն իր միջից ընտրուում է մի նախագահ, գանձապահ և քարտուղար:

Անդամներին հարկաւոր տեղեկութիւններ տալու համար վարչութիւնն ստանում է նրանանցներ խորհրդի կողմից:

Բացի դրանից վարչութիւնը պարտաւոր է ընդհ. ժողովի որոշմամբ կսպ և համերաշխութիւն պահպանել միւս, ոչ-դաշնակցական, արհեստակցական միութիւններէ հետ:

Ներկայացուցիչների խորհուրդ

§ 30. Խորհրդի իւրաքանչիւր անգամ ընտրուում է միութեան տասը (կամ քսան) անդամի կողմից տեղական պայմանների համեմատ:

§ 31 Իւրաքանչիւր ներկայացուցչի հետ ընտրուում է նաև նրա կանգիտատը, որը և հարկ եղած դէպքում փոխարինում է առաջինին:

§ 32. Ներկայացուցիչների ժողովը գումարուում է առնուազն ամսէն երկու անգամ, վարչութեան նրաւերով:

§ 33. Ներկայացուցիչները և նրանց կանգիտատ
ները ընտրուում են 6 ամիս կամ մի տարի ժամանակով:

§ 34. Իւրաքանչիւր մի ներկայացուցիչ պատաս-
խանատու է իրեն ընտրողների ընդհանուր ժողովի ա-
ռաջ, որից և նա ստանում է որոշ հրահանգներ և լիա-
զօրութիւն:

§ 35. Ներկայացուցիչների խորհուրդին է վերա-
պահուում հսկել վարչութեան գործունէութեան վտայ, նա-
խօրօք քննութեան առնել այն հարցերը, որոնք պիտի
բերեն ընդհ. ժողով (համագումար). խորհուրդը պար-
տաւոր է ամսական և տարեկան հաշիւներ հրատարակել
իր գործունէութեան մասին, կասսայի վիճակի մասին և
ընդհանրապէս միութեան գործերի մասին:

§ 36. Ներկայացուցիչների խորհուրդը պատասխա-
նատու է ամբողջ միութեան առաջ:

§ 37. Խորհրդի նիստը համարուում է օրինական,
եթբ ներկայ են բոլոր ներկայացուցիչների կէսից աւելի:

Ծանօթ. Խորհուրդը կարող է իր նիստերին
հրաւիրել նաև գործին ծանօթ անձերի, խորհրդակ-
ցական ձայնով, թէկուզ նրանք անգամ չը լինեն
միութեան կամ պրօֆեսսիայի:

§ 38. Ներկայացուցիչների խորհրդի և վարչութեան
մէջ ծագած թիւրիմացութեան դէպքում հարցը վճռում
է ընդհ. ժողովը, իսկ մինչև ընդհ. ժողովի գումարելը
վարչութիւնը պարտաւոր է հնազանդել ներկայացու-
ցիչներին ժողովին:

VI Միութեան գործերի վերստուգումը

§ 39. Միութեան սեփականութիւնը կազմող գրամ-
ները, գօկումենտները և զբքերը վերստուգման (բէվի-
զիայի) ենթարկելու, նաև նախահաշիւը և հաշւետութիւ-
նը ստուգելու համար ընդհանուր ժողովն ամեն տարի
ընտրում է իսկական անդամների միջից վերստուգիչ
յանձնաժողով, որի անդամները սակայն չը պէտք է լի-

նեն միութեան դործերը կառավարող պաշտօնատար ան-
ձերից. յանձնաժողովի անդամների թիւը որոշում է ընդ-
հանուր ժողովը: Վերստուգիչ յանձնաժողովն ընտրուում
է վեց ամսով կամ մի տարով:

§ 40. Վերստուգութեան համար անհրաժեշտ է կօ-
միստիայի առնւազն երկու անդամի կամ կանգիտատի
ներկայութիւնը: Վերստուգիչ յանձնաժողովը իր քննու-
թեան հետևանքի մասին գեկուցում է ընդհանուր ժողովին:

§ 41. Վերստուգիչ յանձնաժողովը իրաւունք ունի
վերստուգութիւն անելու ըստ իր կարգադրութեան,
ընդհանուր ժողովի յանձնարարութեամբ և կամ ընկե-
րութեան տոնւազն այդքան անգամի պահանջով—որի
մէջ պիտի վերստուգութեան անհրաժեշտութեան պատ-
ճառները ցոյց արւին: Վերստուգութեան հետևանքները
պէտք է հրատարակեն ի գիտութեան միւս անդամների:

VII. Ընդհանուր կանոններ

§ 42. Միութիւնն ունի իր կնիքը:

§ 43. Միութիւնը կարող է ունենալ իր օրգանք,
որը պիտի զբաղւի միութեան վերաբերող հարցերով,
պաշտպանէ նրա շահերը և ընդհանրապէս նւիրւած լինի
պրօֆէսսիօնալ շարժման հարցեր լուսաբանելուն:

§ 44. Միութիւնը իրաւունք ունի ձեռք բերել ան-
շարժ կայքեր, գրաւ դնել նրանց կամ փոխել, կապել
ամեն տեսակ պայմանագիր, նաև պաշտպանել դատա-
բանի առաջ իւր շահերը՝ լիազօրների միջոցով:

§ 45. Միութիւնը իրաւունք ունի ուրիշ վայրերում
ևս բաց անել ճիւղեր՝ համաձայն ընդհանուր կանոնա-
գրութեան:

§ 46. Միութիւնը իր վարչութեան ու ներկայա-
ցուցիչների միջոցով պէտք է աշխատի մշտական կապ
ու համերաշխութիւն պահպանել նոյն արհեստի միւս
միութեան հետ, եթէ այդպիսին գոյութիւն ունի նոյն
քաղաքում: Բացի դրանից նա պէտք է նոյնպիսի կապ

հաստատէ նաև միւս քաղաքների նոյնանման արհեստակ-
ցական միութիւններին հետ:

VIII. Միութեան փակումը եւ նրա գործերի լիկվիդացիան

§ 47. Եթէ անհրաժեշտ համարել փակել միութիւ-
նը եւ դադարեցնել նրա գործերը, այդ հարցը հարկաւոր
է վճռել երկու ընդհանուր ժողովներով, որոնց մէջ ե-
րկու ժամանակի միջոցը առնուազն մէկ ամիս պէտք է
լինի: Այս հարցը վճռելու համար պահանջուում է միու-
թեան անդամների $\frac{2}{3}$ -ի համաձայնութիւնը: Առաջին ընդ-
հանուր ժողովի վճռով կանգ են առնում միութեան գոր-
ծերը եւ նրա ամբողջ գործունէութիւնը սահմանափակում
է իր գործերի լիկվիդացիայով, որի համար եւ ընտրուում
է յանձնաժողով: Երկրորդ ընդհանուր ժողովի վճռով
դադարում է միութեան գործունէութիւնը:

§ 48. Միութեան ունեցած կապիտալները եւ կայ-
քերը սնորհիւնում են համաձայն ընդհանուր ժողովի վճռի,
բացի այն կապիտալները եւ կայքերը, որոնք արւած են
միութեան յատուկ պայմաններով. այս պայմանների հա-
մեմատ էլ նրանք գործադրութիւն են գտնում:

ԳՒՆԱՆՈՐ ՎՐԻՊԱՆՆԵՐ

Տպած է

պէտ է լինի

35 հր. 2-րորդ տող 1905 թ. յունւարին

1906 յունւարին

37 հր. 17-րորդ եւ 22-րորդ տողերում

պէտք է լինէր շուրջիկների վերա-
ծած, այսինքն այդ թւերը զրե-
թէ երկու անգամ պակաս:

Հօլանդիայի եւ Աւստրիայի արհես-
տակց. միութ. տարեկան եկամուտի
ու ծախսի գումարները նշանակած է
մարկիւրով

Օտեկի

49 հր. 3-րորդ տող—Օտեկի

1905 թ.

52 հր. 25-րորդ » 1906 թ.

53 հր. 14-րորդ տողից յետոյ բաց է
թողած մի ամբողջ նախադասութիւն:



76 հր. 25 տող. այն

«Ազգային գրադարան»



NL0199365

